Հ.Յ.Դ. ԲՅՈՒՐՈ
ԳՐԱԳԱՐԱՆ
A.R.F. BURO
LIBRARY

ԴՐՕՇԱԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

1905

№ 13 (166) XV ՏԱՐԻ ԴԵԿՏԵՄԲԵՐ 1905

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ A.R.F. BURO LIBRARY

Հ. Յ. Դաշնակցութեան կովկասեան մարմինները, հանձնարարելով հայ տարբեր խորհրդի գծած ցուցմունքների, որոշել են հրատարակել Կովկասում դաշնակցական յատուկ լրագիր, օգտուելով մամուլի ազատութիւնից, խլուած միապետութիւնից յեղափոխական կռուի միջոցով։ Ի նկատի ունենալով, որ կովկասեան նոր հրատարակութեան մէջ արտայայտութիւն պիտի գտնէ մեզ զբաղեցնող խնդիրների մի նշանաւոր մասը, խմբագրութիւնը որոշեց „Դրօշակը", որ սկսել էր լոյս տեսնել ամիսը երկու անգամ, նորից միանուագ դարձնել։ „Դրօշակը" շարունակում է մնալ Կազմակերպութեան միակ պաշտօնական օրգան։

ՆԱԻԱՅԻՆ ՅՈՅՑԸ

Փրկութիւն չը կայ... Կիսալուսինը պիտի խաւարի և նրա տեղը վաղ թէ ուշ պիտի ծածանուի ապատ ինքնավար ժողովուրդների վեհապանծ դրօշը։ Պայքարը վայրենութեան ու քաղաքակրթութեան մէջ է և իզուր օսմանեան քարացած թէօկրատեան, իզուր Ասիայի այդ զառամեալ ծնունդը, անզօր ցասման մէջ, շարունակում է ապաւինել իր նոյնքան զառամեալ դիւանագիտութեան վաղեմի սադրանքներին՝ քաշքշելու համար մի տիրապետութիւն, որ դատապարտուած է անպատիւ այլասերման, անխուսափելի մահուան։

Դանդա՞ղ, բայց դրական, հաստատուն քայլերով մերձենում է այդ մահը։ Երբ փտող, յօշոտուող օրգանիզմից այս կամ այն ձևով կը զատուեն քրիստոնեայ բոլոր տարրերը,—երևակայեցէք, թէ որպիսի կմախք, որպիսի պլանդակ անախրօնիզմ պիտի ներկայացնէ տաճկական թէօկրատիան, յենուած ամուլ ու անշարժ Իսլամի վրայ, զուրկ կուլտուրական շինարար աշխատանքի աղբիւրներից, զուրկ վերջապէս իր երեկուայ մխիթարութիւնից՝ բանապետական և նոյնպէս թէօկրատ Ռուսաստանի հարևանութիւնից։

Այո՛, կիսալուսինը վաղ թէ ուշ պիտի մարի և պիտի տեղի տայ քաղաքակրթութեան պայծառ, կենսաբար Արեգակին, որ այսօր տիրականօրէն սփռում է իր ճառագայթները ստրկութեան ամենադժնդակ վայրերում, ձգտելով ստեղծել ողջ երկրագնդի վրայ համամնական կեանքի միապաղաղ ձևեր։ Թիւրք ժողովուրդը, օսմանեան ցեղը, կամ պիտի իւրացնէ կուլտուրայի նուաճումները, դառնայ ազգութիւն, դառնայ օրգանական հասարակութիւն, կամ՝ պիտի կուլ գնայ քաղաքակրթութեան կոհակների մէջ, կամ՝ թէ Գլադստօնի անագորոյն խօսքի համեմատ՝ պիտի յետ քշուի դէպի Ասիայի հեռաւոր խորշերը, ուսկից դարեր առաջ նա կազմակերպեց իր մահագեր, անիծեալ արշաւանքը։

Հասարակութիւնները վերանորոգւում են և անգամ ամենաճիւղային մակեավէլիզմը, անգամ ամենահմուտ դիւանագիտական սադրանքները անկարող են տևողաբար արհամարհել ազատութեան ճիչը ստրկացուած համայնքների մէջ։

Եւրոպան երկար սպասեց, վարանեց. երկար ժամանակ ըէֆորմատօրական ամուլ ու անարժան մարզանքներ արաւ, խաբեց Ա՛ակեդոնիային, խաբեց ինքն իրեն ներ արաւ, խաբեց ինքն իրեն և, ի վերջոյ, իրողութիւնների զորեղ ճնշման տակ՝ ինքն էլ ճչաց,—մի ճիչ, որ վաղուց մենք չէինք լսած և որ սարսափով լսեց ինքը Եըլդըզի բռնաւորը։

Հաւաքական նաւային ցոյց սուլթանի դէմ—ահա ներկայի մեծ իրողութիւնը։ Սուլթանի ստրուկները և ամբողջ քաղաքակիրթ աշխարհը սրտի խորին գոհունակութեամբ դիտում էին քիչ առաջ այդ սիմբոլիկ տեսարանը, դիտում էին այն գիտակցութեամբ՝ որ եւ

բոպան կայ, որ տերահուչակ կօնցերտը կարող է պսակուել ցանկալի աջողութեամբ, կարող է դառնալ ազատութեան գործիք, եթէ միայն մէկը մեծ երաշխաւոր պետութիւններից նախաձեռնող յայտնուի ու գլուխ կանգնի ազատարար ձեռնարկին։ Ներկայ պարագայում նախաձեռնութեան պատիւը պատկանում է Անգլիային։

Ռուս-աւստրիական ողբալի համաձայնութիւնը երեք տարի շարունակ պտոյտ եկաւ խնդրի մակերևոյթի վրայ և ակներև կերպով ցոյց էր տալիս, որ մակեդոնական ամբողջ կօշմարը, միլիօնաւոր ժողովրդի յարատև տանջանքներն ու ցնցումները արժէք չունեն Պետերբուրգի ու Վիեննայի բռնակալների աչքում։

Անգլիան պահանջեց փոքր ինչ խորը գնալ, փոքր ինչ աւելի արմատական լուծման ճանապարհ բռնել և քարշեց իր ետևից արևմտեան ռամկավար պետութիւններին։ Եւ ահա Անգլիայի դրդմամբ, եւրոպական նաւերը դէմոնստրատիվ ու սպառնալի դիրք բռնեցին Թիւրքական ջրերում։ Իզուր մարդասպանը, երկիւղի տիրապետութեան տակ, սկսեց իր կողմից վախեցնել Եւրոպային մահմէդական ֆանատիկոսութեան ուրուականով, ջարդերի սպառնալիքներով,—սին սպառնալիքներ, որոնց հետ միաժամանակ սուլթանական ոստիկանութիւնը ամենախիստ միջոցներ էր ձեռք առնում ամեն տեղ՝ հնարաւոր բունկումները տեղն ու տեղը խեղդելու համար։ Իզուր նոյնպէս Համիդը աղերսանօք դիմումներ էր անում իր հօհէնցօլլերն Թագակիր եղբօր՝ Կայզէրին՝ խնդրելով պատնէշ կանգնել եւրոպական արշաւանքի դէմ, և իզուր Կայզէրի անհոգի դիւանագիտութիւնը սովորական ցինիզմով ձգտում էր խանգարել կայացած համաձայնութիւնը և մի անգամ ևս խոչընդոտ կանգնել բազմատանջ մի ժողովրդի ազատագրութեան.—գործը գլուխ եկաւ առանց Գերմանիայի, նոյնիսկ հակառակ նրա ոճրագործ տրամադրութիւնների։

Նաւերը դրաւեցին Միտիլէն ու Լէմնոս կղզիները և պատրաստւում էին աւելի հեռու գնալ Թերևս դէպի Դարդանէլ երբ ծանուցեց սուլթանի կարևոր զիջման մասին։ Դուռը ընդունեց եւրոպական հսկողութեան, կօնտրոլի սկզբունքը՝ Մակեդոնիայի ֆինանսական վարչութեան մէջ։

Մի մեծ քայլ արուած է։ Այդ քայլը սահման է դնում տաճկական անսանձ կամայականութիւններին Մակեդոնիայում. այսուհետև Եւրոպան իր յատուկ ներկայացուցիչների միջոցով պիտի գործադրէ իր բարենորոգող վերհսկումը դժբախտ երկրի ադմինիստրասիոնի մէջ, պիտի բարձրացնէ ուղղակի իր ձայնը՝ բ ա ւ ջ է սահմանելու երեք վիլայէթների համար, համաձայն ամբողջ ազգաբնակութեան կարիքներին։ Ի՞նչ խօսք, որ մակեդոնական շարժումը դրանով չը պիտի գոհանայ, նա պիտի ձգտէ կատարեալ ինքնավարութեան...

Կօնտրոլը իրական, ազդու, արդասաւոր,—ահաւասիկ եւրոպական ցոյցի ճշմարիտ իմաստը։ Աւստրօ-ռուսական համաձայնութիւնը եւրոպացի օֆիցերներ ու ժանդարմներ մտցրեց Մակեդոնիայում, բայց սրանց գործունէութիւնը սիստէմատիկաբար խանգարուեց, անդամալուծուեց Հիլմի փաշայի ջանքերով,—այն աստիճան՝ որ մինչև օրս ոչ մի լուրջ ռէֆօրմ, ոչ մի զգալի բարւոքում չէ մտած տակաւին թշուառ ժողովրդի կացութեան մէջ. անհրաժեշտ էր ֆինանսները շտկել, անհրաժեշտ էր ելևմտի վարչութեան մէջ մտցնել եւրոպական տարրը և նա արդէն մտցուած է։

Կօնտրո՛ լ. տասնեակ տարիներից ի վեր սուլթանական բռնապետութիւնը ճչում, բողոքում է այդ ահարկու բառի դէմ, որ այնքան անողորմ կերպով բռնանում է սուլթանների միահեծան իշխանութեան վրայ, սահմանափակում է նրանց իրաւունքները, մահացու հարուած է տալիս կայսրութեան ամբողջութեան։ Եւ այս անգամ ևս նոյն բռնապետութիւնը իր արժանաւոր օրգանների միջոցով, նոյն աւանդական ոգին է հնչեցնում, նոյն օրհասի աղաղակը. „Ֆինանսական կօնտրոլը խախտում է օսմանեան գերիշխանութիւնը, նա հակառակ է անգամ Բերլինի դաշնագրութեան...“

Էլ ոչ ոք չէ լսում։ Ոչ ոք, բացի անշարժ ու յետադէմ Գերմանիայից, ոչ ոք, բացի բիսմարկեան անսիրտ դիւանագիտութիւնից, տրամադիր չէ ականջ կախելու այդ գարշելի ողբին. *Tout lasse, tout passe*... Անգամ վաղեմի ծախու մամուլը, խոշոր, տոն տուող թրքասէր մամուլը, այսօր հիմնապէս փոխել է իր դիրքը դէպի արևելեան կնճռոտ ու արիւնոտ խնդիրները. էլ նա չէ շոյում իսլամի վայրենի բնազդումները, էլ գովք չէ կարդում բարի, գթառատ Փադիշահին...

ՀՈԳԵՒԱՐՔԻ ՑՆՑՈՒՄՆԵՐԸ

Ի՞նչ պիտի առաջանայ հսկայական քաօսից.. Եւ արդեօք առանց նորանոր արիւնհեղութիւնների՝ ուրէ լաւ բան պիտի առաջանա՞յ...

Ա՛ռ այժմ ռուս կառավարութիւն, ռուս պետութիւն ասած բանը չը կայ, նա լ ի ն ե լ ո ւ թ ե ա ն պրոցէսի մէջ է,—*im Werden*. Ներկայինը ոչ բռնապետութիւն է, ոչ ինքնակալ, ոչ էլ սահմանադրական միապետութիւն։ Քաօս է։ Վաղուան մեծ Անյայտը անթափանցելի մառախուղի մէջ է, ոմանց աչքում նա նոյնանում է զինուորական դիկտատուրի, ուրիշների աչքում՝ ամենառամկավար սահմանադրութեան։

Ռէակցիան դեռ յոյսեր ունի. բռնապետութիւնը դեռ կանգուն է, թէև չափազանց խարխուլ, երերուն։ Պօբէդօնօսցէվի, Տրէպօվի, մեծ իշխան Վլադիմիրի փութկոտ հրաժարականներից յետոյ՝ նոր գիծում չը տեսանք։ Անձնաւորութիւնների փոփոխութիւն է միայն կատարուում, ս ի ս տ է մ ը յամառ ձգտումն ունի յա-

բատեալու։ Մինիստր Դուրնովո բաւական ազդուրեամբ փոխարինում է Պոբեդոնոսցեվին ու Տրեպովին։ Զը նայած ժողովրդական ամենօրեայ պահանջումներին՝ նա հրաժարական չէ տալիս։ Անշուշտ, սև ուժերը մը-տածում են, որ արդէն շատ խոշոր զիջումներ են տուել ցեղափոխութեանը և որ աւելի հեռուն գնալ չէ կարելի։ Ասողներ էլ կան, թէ Պոբեդոնոսցեվը ձեւակա-նապէս է միայն հրաժարուած, որ նա ամեն օր այցելութեան է գնում Պետերհոֆի անձաւ խորտիլակին։

Իսկ ի՞նչ է անում Ցեղափոխութիւնը։ Նա ամեն օր՝ նոր ու յարաձուն ոլոտումներով հասկացնում է բըռնապետութեանը, որ անարգ ուէժիմը քաշքշելու հնարը կայ։ Սեվաստոպոլի զինուորական անօրինակ ապստամբութիւնից յետոյ, որին գլուխ էր կանգնած այժմ հռչակաւոր լեյտենանտ Շմիտ, և որը խեղդուեց հարիւրաւոր ըմբոստ զինուորների արեան մէջ, այժմ ահա շարժւում են Բալտիան նահանգները։ Վերջին հեռագիրներից երևում է, որ այնտեղ խաղացւում է մի հսկայական գործ, որպիսին թերևս տակաւին չենք տեսած Ռուսաստանի վերջին պատմութեան մէջ։ Ռիգան. այրւում է, իշխանութիւնները գերի են բռնուած, յեղափոխականները տէր են դրութեան և հռչակել են Բալտեան նահանգների անջատումը կայսրութիւնից, ռամկավարական-հանրապետութեան ձևով... Զօրքեր ու նաւեր են գնում՝ պատժելու խիզախ յանդուգն սեպարատիզմը։ Գերմանիան ևս ալէկոծւում է, Վիլհէլմ կայսրը նաւեր է ուղարկում Բալտեան ափերը՝ իր գերմանացի հպատակների կեանքն ու գոյքը փրկելու համար...

Սոսկալի թափեր է առնում ցարատեաց Նէմէզիդան։ Այսպիսի օրեր կարո՞ղ էին նախատեսել Պետերհոֆում... Ցիշատակում ենք խոշոր, ցնցող իրողութիւնները, զանց առնելով հազարաւոր մանր փաստերը, որոնցից սակայն կազմւում է Ցեղափոխութեան առաջնաղաց, յաղթական պրոցէսը։

Եռում է ամեն տեղ, և քաղաքներում և գիւղերում, ամենահեռաւոր անկիւններում անգամ։ ազատ մամուլը— որ Դուրնովոն իզուր ճգնում է կաշկանդել, լռեցնել—միշտ աւելի յանդուգն տոնով արշաւում է կամարիլլայի և ամբողջ բիւրօկրատիայի դէմ, պահանջում է պատժել հրէական և այլ մասսային ջարդերի հեղինակներին, ելէքտրականացնող կոչեր է ուղղում Ռուսաստանի զօրքին, որը արդէն յուզւում է և մերթ խուլ, մերթ բացարձակ ըմբոստութեամբ այստեղ ու այնտեղ՝ ազդարարում է իր յեղափոխական համակրութիւնները և սարսափ է ձգում բռնակալութեան վրայ։ Անթիւ են վերջին կարճ ժամանակամիջոցում զինուորական մասսային ըմբոստութեան դէպքերը։ Զօրքը ալէկոծւում է նոյնիսկ հեռաւոր Մանջուրիայում և գեներալ Լինէվիչ յորդորում է կառավարութեանը, շտապով յետ կանչել Մանջուրիայի բանակը։

Այն ինչ ներսում բանւորները, փոստի ու երկաթուղու ծառայողները շարունակում են մասսային գործադուլները, իսկ ժողովրդական այլ և այլ դասերի շահերի արտայայտիչ՝ քաղաքական կուսակցութիւնները եռանդով կազմակերպւում են. ծայրայեղ սոցիալիստական կուսակցութիւններն անգամ ազատ պարզում են իրենց դրօշակները հիմնում են իրենց բերան օրգանները և ազատ խօսքը—կորովի, հմայիչ,—բիւրաւոր արձագանքներով թռչում է երկկայ ստրուկ կայսրութեան մի ծայրից միւսը։

Այդ բոլորին մինստր Դուրնովո՝ իր անձամբ Տիրոջ համաձայնութեամբ՝ պատասխանում է պոլիցիական բիրտ միջոցներով, նա ձերբակալում է բանւորական առաջնորդներին, ցրւում է գիւղացիական մեծ ընկերութիւնների կենտրոն—բիւրոները և նորէն լցնում պարապուած բանտերը։ „Ճակատագրական“ է... Լուդովիկոս XVI-ի աշխարհաշառաչ մարտիրոսութեան դափինները, ըստ երևութին, հանգիստ չեն տալիս Նիկոլա ցարին և նա որոշել է, անդրդուելի վճռականութեամբ, արժանանալ Քաւութեան մեծ օրին։

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԱՐԻՆԱՀԵՂ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ

ՊԱՏՃԱՌՆԵՐ ԵՒ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐ

II

Կան ողբալի թիւրիմացութիւններ, նախապաշարումներ հայ ժողովրդի, յեղի նկատմամբ, որոնք բերնէ բերան, երկրէ երկիր տարածելով, առեղծում են որոշ շրջաններում աննպաստ, նոյնիսկ թշնամական տրամադրութիւններ դէպի հայութիւնը, նրա իդէալները, նրա պաշտպանած դատը, նրա մղած պայքարը։

Այդպիսի այլանդակ նախապաշարումներից է այն վայրիվերոյ յայտարարութիւնը՝ թէ հայկական շարժումը, տոգորած մնլեռանդ նացիոնալիզմով, ձգտում է անկախ հայկական պետութեան, կամ այն միւս տարածուած պարադոքսը, որի համեմատ հայ ժողովուրդը յայտնւում է որպէս շահի ու կեղեքման տենչանքով բռնուած, էապէս վաշխառու, առևտրական մի տարր։

Թուրք բուրժուազիայի և մահմեդական ֆանատիկոսութեան իդէոլոգները ճարպիկ կերպով կարողացան շահագործել հայ յեղափոխութիւնն ու հանուր հայութիւնը վարկաբեկող այդ թիւրիմացութիւնները։ Նրանք հնչեցրին ահազանը դէմ, նրանք տարածեցին առասպելներ հայկական կոմիտէի, նրանք տարածեցին առասպելներ հայկական կոմիտէի, նրա երևակայական շահատակութիւնների ու դաւերի մասին։ Նրանք ամեն աւթիւ, առանց այն էլ կասկածամիտ ու հայատեաց բիւրօկրատիայի առջև, շեշտեցին հայի „սեպարատիզմը“, հայ յեղափոխականի անջատական, ազգայնա-

մալ ձգտումները։ Նրանք ի յոյդ դրին հայ դործիչին, որպէս ամբարիշտ, ֆանատիկոս մի տիպ, որ թունաւոր ատելութիւն միայն ունի դէպի դրացի ժողովուրդները, մանաւորապէս դէպի Թուրքութիւնը։

Եւ այդ առասպելներն ու ինսինուացիաները ըստ երեւութին հաճելի էին մեր միւս դրացիներին, նոյնիսկ արմատական ներկայացուցիչներին, ռուս ու վրացի որոշ կարգի սոցիալ-դէմոկրատներին, որոնք փութկոտութեամբ ձեռք առան Աղայէվների թեզիսները և աղմկեցին մթնոլորտը մարտական լոզունգներով— „Հայ նացիոնալիզմի դէմ“, „Հայ առանձնացման դէմ“, „Դաշնակցութեան դէմ“։

Թուրք իդէօլոգների, պանիսլամիզմի աւազանում մկրտուած թուրք ագիտատորների հակահայկական ու հակայեղափոխական այդ արամադրութիւնը բղխում էր անտարակոյս, մասամբ հեռաւոր իրողութիւններից,—բղխում էր, այն մեծ, ազատագրական պայքարից, որ հայ մարտական կազմակերպութիւնը տան և հինգ տարուց ի վեր մղում է Տաճկաստանում, բռնակալ մի տիրապետութեան դէմ, հերոսական անձնուիրութեամբ ու անօրինակ զոհողութիւններով. . .

Դժուար է, այո, պահանջել Աղայէվներից մի վայրկեան թօթափել ցեղա-կրօնական ազգակցութեան ու սուլթանական բռնութեան կուլտը և հասկանալ, գնահատել հայ մարտիկի հոդեբանութիւնը, նրա հերոսական պայքարի իմաստը. դժուար է պահանջել այդ մտաւոր ներքինիներից նոյնիսկ տարրական ծանօթութիւնը՝ պատմական փաստերի, հայ քաղաքական կուսակցութեան ծրագրի, նրա տակտիկի և սկզբունքների, նրա առաջադրած maximum պահանջների և այլն և այլն։ Բայց մեզ թւում է, որ այդքան ծանօթութիւն կարող էինք պահանջել վրացի և ռուս սոցիալ-դէմոկրատներից, առաւել ևս սրանց հայ համախոհներից, որոնք օրթօդոքսութեան մէջ յետ չէը մնալու համար, նոյնպէս երբեմն-երբեմն հրապարակ են գալիս կովկասեան մամուլի մէջ, պատրաստ, կատեգորիկ յայտնութիւններով, ուր դրեթէ բոլոր պատուհասների մեղքը դցում են հայկական կապիտալիզմի ու նացիոնալիզմի վրայ։ Հասկացողութիւնները խեղաթիւրւում են և ապացոյցների տեղ դուք տեսնում էք միայն պարադոքսների ու պառաւական բամբասանքների մի տարափ. . .

Հայ յեղափոխութիւնը սեպարատիստ։ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը՝ ազգային առանձնացման ջատագով, ազգերի համերաշխութեան հակառակորդ, կռիւ ու ատելութիւն սերմանող. . Բայց ո՞վ է տասնուհինգ տարուց ի վեր Տաճկաստանի մայր հօրիզոններում համերաշխութեան քարոզ հնչեցնողը, քրդին ու տաճկին համերաշխ կռուի հրաւիրողը, ո՞վ է, որ իր օրգանների մէջ, երկար տարիների ընթացքում արծարծել է խաղաղ համայնակեցութեան գաղափարը ամենայլազան համայնքների միջև մեղադրել է միշտ—հայկական անծայր ողբերգութեան մէջ — միմիայն սուլթանական բռնակալութիւնը և միշտ արդարացման քաւէ է տուել թիւրք ժողովրդին, չը նայած վերջինի ուղղակի մեղակցութեան, նրա հայակեր ֆանատիկոսութեան բռնկումներին . . .

Անցեալի դառն, հիասթափեցնող փորձերն այդ ուղղութեամբ չէին վհատեցնում հայ յեղափոխական կազմակերպութիւնը և ահա վերջին, 1904-ի Ընդհանուր ժողովը, տոդրուած նոյն համերաշխութեան ոգով, միաձայն որոշում է՝

«Շարունակել թիւրքահպատակ այլ և այլ տարրերու հետ (քիւրդ, տաճիկ, ասորի, լիբանանցի, մակեդոնացի և այլն) համերաշխ գործակցութեան տակտիկը, որով մինչև օրս ղեկավարւած է Դաշնակցութիւնը՝ յանձնարարելով բոլոր պատասխանատու մարմիններում, բիւրօներում ու կենտրոնական կոմիտէներում, ըստ տեղական հանգամանքի, գործնականապէս մշակել բաղձալի մերձեցումի պահանջը այդ տարրերու հետ։»

„Նացիոնալիստ“ հայ կուսակցութիւնը քանի՞ քանի անդամ համերաշխութեան յորդորներ է ուղղել նոյնիսկ Երիտասարդ տաճիկներին, քանի՞ցս փորձել է միանալ նրանց հետ, ծրագիրներ են կազմել, համաձայնութիւն է կնքել որոշ յեղափոխական ձեռնարկների շուրջը, բայց և միշտ վիժել են այդ շարաբաստիկ էքսպերիմենտները, շնորհիւ տաճիկ յեղափոխականների բարոյական հեղգութեան, գաղափարական նկարագրի և թռիչքների բացակայութեան։

Նոյն համերաշխութեան կոչերը չէ՞ն ուղղել և կովկասեան թուրքերին... Տասնեակ տարիների ընթացքում նոյնիսկ հայկական լիբերալիզմը չէ՞, որ յանձին Արծրունու և իր ֆալանդայի, սիստեմատիկաբար համերաշխ, եղբայրական գործակցութեան է հրաւիրել մահմեդական տարրը, խաղաղ, կուլտուրական ասպարէզում։ Հետևա՞նքը... Այս է՞ արդեօք հայ նացիոնալիզմը, սոցիալ-դէմոկրատական „Պրոլետարի“-ի հռչակած „ազգային առանձնացումը“...

„Նացիոնալիստ“ հայ կուսակցութիւնը համաձայնութեան դաշն է կռւում Տաճկաստանում՝ մակեդոնացիների հետ, Ռուսաստանում՝ ռուս ու վրացի, լեհ ու ֆինլանդացի յեղափոխական ուցիալիստների հետ՝ ընդհանուր ուժերով պայքարելու բռնապետութեան դէմ և իրագործելու ամենալայն ռամկավարական ազատութիւնները։

„Նացիոնալիստ“ հայ կուսակցութիւնը առաջադրել է տասնկահայկական իր ծրագրի մէջ՝ ոչ զուտ ազգային, այլ տերիտորիական ինքնավարութիւն, որի բարիքները պիտի վայելեն հաւասարապէս ապագայ ազատ հայ նահանգների բոլոր համայնքները, առանց խտրութեան ցեղի և կրօնի։ „Նացիոնալիստ“ հայ կուսակցութիւնը, դեռ տասնհինգ տարի սրանից առաջ, մտցրել է նոյն ծրագրում ռամկավարութեան ու սոցիալիզմի գաղափարները, ծանուցել է աշխատաւոր դասակարգի գալոց յաղթանակը, արծարծել է այդ գաղափարները իր հրատարակութիւնների մէջ—ինտելիգենտ տարրերի համար—և այդ այն ժամանակ, երբ հայրենիքում հալածւողների ճիչը և կռւի շռինդը միակ ցաւոտ այժմեութիւնն էին։

Եւ, համաձայն կուսակցութեան սկզբունքներին, նրա լայն, միջազգայնական դաւանանքին, Դաշնակցութեան ֆեդայիները Տաճկահայաստանում իրենց երկարամեայ փոթորկոտ կռիւներում թիւրք կառավարութեան և քրդական հրոսակների դէմ՝ ունեցել են միշտ գաղափարական զինուորներին յատուկ վեհանձնութիւնը՝ խնայել թոյլերին ու անմեղներին—կանանց, ծերերին, երեխաներին—մի մտահոգութիւն, որ նրանք երբէք չեն տեսել իրենց անհոգի թշնամիների մէջ... Նոյն տակտիկով է ղեկավարւում Դաշնակցութիւնը և ներկայ կովկասեան տագնապի միջոցին, թուրքերի դէմ ուղղած ինքնապաշտպանութեան կռւում։ Նա բարբարոսի փոգրոգութեամբ գրոհ չէ տալիս հակառակորդի դէմ այն վայրերում, ուր վերջինը կազմում է աննշան փոքրամասնութիւն, նա տրամադիր չէ փոխ առնելու դրացու նախապատմական կռւի մեթոդը և ծաւտաւած դիակների շուրջը դիւային խրախճանքներ սարքելու... Չ'երկարացնենք։

Նացիոնալիստ հայ կուսակցութեան խորհուրդը, վերջապէս, — առաջին հեղինակաւոր մարմինը Ընդհանուր ժողովից յետոյ—մշակեց տարւայ ընթացքում ռուսական Հայաստանի համար դործունէութեան մի նախագիծ, հիմնուած մի կողմից՝ կովկասեան ազատ ինքնավար աղգերի դաշնակցութեան, միւս կողմից սոցիալիստական միջազգային կօնդրէսների հիմնական սկզբունքների վրայ։

Ահա „Դաշնակցութեան“ նացիոնալիզմը։ Ահա թէ ինչպէս են հրապարակ նետւում—ինչպիսի աններելի թեթեւամտութեամբ — ամենածանր ամբաստանութիւնները մի կազմակերպութեան դէմ, որ իր դերն ունի տանջող ու աղտոտագրւող մի ժողովրդի պատմութեան մէջ։

Ահ, անտարակոյս, բամբասանքի ու ինսինուացիայի հերոսները, որ հետամուտ են դաշնակցականների ամենաանարշան արարքներին անգամ և որ անսովոր փութկոտութիւն են ցոյց տալիս՝ այդ արարքները յաղթական ձևերով հանրային ուշադրութեանը մատնելու համար, չեն համակերպի անդամ ամենայատակ փաստերի առջև, նրանք կը յիշեն ձեզ այս ինչ միջադէպը, այնինչ անկանոն, դատապարտելի քայլը, կատարւած կուսակցութեան այս կամ այն անդամի կամ խմբի կողմից։ Նրանք կը յիշեն դաշնակցական նացիոնալիզմի ու շովինիզմի այս կամ այն հակադարձ շարժումները, թեկուզ հէնց վերջին երեք տարւայ ընթացքում, եկեղեցական դոյքերի յափշտակման, ցարիզմի ու թուրք խուժանի արշաւանքների միջոցին. . . բայց ո՞ւմ կը զարմացնեն նրանք, ո՞ւմ կարող են զարմացնել նոյնիսկ ծայրայեղ նացիոնալիզմի

այդ մասնակի արտայայտութիւնները մի էպօխայում՝ երբ հայը իր շուրջը տեսնում է միայն արիւն ու արհաւիրք, երբ դրակօնական, բայառիկ օրէնքները բոլոր թափով նրա վրայ են ծանրանում, երբ նրա գոյութեան դէմ, նրա հաւքական, ցեղային գոյութեան դէմ դաւեր է նիւթում բոլոր սև ուժերի դաշնակցութիւնը, երբ երեկւայ խաղաղ ու անդորր կարծած հայրենիքում բռնաբարում են նրա ամենանիրական սրբութիւնները, արիւնով ներկում եկեղեցիների գաւիթները, կօզակների ուխտերի տակ տալիս կանանց և երեխաներին. երբ լանկրեանական արշաւանքը ուրագանի պէս պայթում է անզէն ժողովրդի վրայ, անապատ դարձնում հայի արիւն-քրտինքով մշակած շէն վայրերը, չորս կողմը սփռում դիակների կոյտեր, կսկիծ ու հառաչանք, նզովք ու ցասում,—և երբ արիւնալի այդ քաօսի մէջ, բռնութիւնների, լացի ու փախի այդ հսկայական տարտարոսում չկայ ոչ մէկը, որ գէթ կարեկցութեամբ ձեռք մեկնէ անարդ, հրեշային դաւադրութեան զոհին, երբ շրջապատող հասարակութիւնները ընդհանուր առմամբ անզգայ հանդիսատեսի դեր են կատարում և նոյնիսկ՝ լուսեայն կամ բացարձակօրէն՝ մեղադրում են զոհին, փոստաբանում դահճին... Ասացէք, խնդրեմ, ո՞ր խելահաս մարդը կարող է քար նետել այն երիտասարդի վրայ, որը անհնարին զայրագնութեան մէջ, այս կամ այն դէպքում, այս կամ այն առթիւ—թեկուզ հէնց յեղափոխական դրօշակի տակ—բուռը, ծայրայեղ արտայայտութիւն է տալիս իր շատ բնական հայրենասիրութեան...

Հայահալած չարակամութիւնը սահման չունի։ Հայի ինքնապաշտպանութեան քայլերն անգամ անհերելի յանցանք եղան կովկասեան հայատեաց արէօպագի աչքում։ Յիշեցէք, ընթերցող, թէ որպիսի թշնամանք ու ցասում յայտնեցին վրացի ու թուրք շօվինիստները նակաշիձէի սպանութեան առթիւ, ինչպիսի անպատկառ ցոյցեր եղան հայերի դէմ։ Հնաւանդ, վայրենի ատելութիւնը չէր կարող մարսել, որ երեկւայ հլու „ռայան“ կարողանար այնքան սասանեցուցիչ ձևերով պատժել իր ժողովրդի դահիճներին։ Նրանք չէին կարող մարսել և ուրիշ մի շարք տերրօրական ակտեր, որ Դաշնակցութիւնը ի գործ դրեց—ընդհանուր մասսային շարժման հետ միասին—իբրև անհրաժեշտ պրեվանտիվներ, իբրև կանխիչ և միանգամայն վրէժխնդիր միջոցներ, որոնք նպատակ ունէին ըստ կարելւոյն նւազեցնել սարսափների, կառավարչական տերրօրների կրկնողութեան հնարաւորութիւնը։ Հայը համարձակւում է պաշտպանուել, դժո՞ւխք և անէծք,—ասնում էր մարդախոշոր արէօպագը...

Cet animal est méchant
Quand on l'attaque, il se défend.

Եւ զայրանում ու զարկում են ահակոչնակը հայի մեղապարտ յանդգնութեան դէմ. ռումբն ու տերրօրը ենթարկւում են թուրք աղաների ու մելլաների, վրացի պորտաբոյծ ազնւականութեան շանթարձակ անաթեմաներին, որոնք մի անուր ցինիզմով հնչեցրւում են անգամ կովկասեան կառավարչապետի պալատում... Հայի դրացի ժողովուրդների իշխող դասակարգերը այդպիսով ձեռք ձեռքի տուած, մի արտառուչ համերաշխութեամբ, հանդիսաւորապէս ըստանձնում են մատնիչի դեր և ամբողջ հայ ժողովուրդը դրւում է մեղադրեալի նստարանի վրայ։ Հսկայական, պատմութեան մէջ չը տեսնւած օստրակիզմ... Հայութեան երդուեալ թշնամիները չեն կարող հանդուրժել առհասարակ հայկական շարժումը և, ինչպէս որ հայ կապիտալիզմի մէջ նրանք տեսնում են համայնակուլ մի հրեշ, որ մի օր պիտի նւաճէ բովանդակ Կովկասը, այնպէս էլ հայ շարժման մէջ նրանք կարծես ընդհանրանում են մի չարաղետ սկզբունք, ուղղած ոչ միայն բիւրօկրատիայի, այլ և իրենց բոլորի դէմ։ Ահա մի ողբալի մտավիճակ, որ պակաս դեր չէ խաղում հայ մարդու դժբախտութիւնների մէջ։ Հայ յեղափոխական տարրի ամենաբնական կուռ ձևերը, բիւրոգիական աշխարհում իսկ ընդունւած ու սրբագործւած արտայայտութիւնները դառնում են օտար չարակամ քննադատների աչքում մի անախրոնիզմ, դիւային մի խաղ...

Ոչ, և դարձեալ ոչ։ Մենք „ազգային առանձնացում երբեք չենք քարոզել և չենք դատապարտել։ Եւ եթէ վրացի սօցիալ-դէմօկրատները որոշել են „անդադար կռուել նացիոնալիզմի դէմ, ոչնչացնել նրան իր արմատում“,*) եթէ այդտեղ ի նկատի ունեն մեր նացիոնալիզմը, ապա նրանք զարնւում են բաց դռների։ Նոյնքան անմտած են վրացի սօցիալ-դեմոկրատների միւս յայտարարութիւնները՝ թէ „վտանգաւոր է պարզել ազգային դրօշակներ“—իբր թէ նրանք են պատճառ դառնում խուլիգանական շահատակութիւնների—թէ ազգայնական ընդհարումները ծնունդ են հէնց նացիոնալիզմի, թէ ուրիշ կուսակցութիւնների շնորհիւ է, որ „հայ գիւղացիները ոչ մի մասնակցութիւն չեն առնում ընդհանուր յեղափոխական շարժման մէջ՝ և այլն և այլն։

„Ազգային դրօշակներ չը պէտք է հանել“—ահա մի պահանջ, որ միանգամայն ներդաշնակւում է ռուս „Պրօլետարի“-ի ծանօթ, յիշատակւած յայտարարութեան հետ՝

„Այն իրողութիւնը՝ որ այդ օրերում (Բագւի կոտորածի օրերում) իրենց ցոյց տալ կարողացան միմիայն նացիոնալիստ Դրօշակեանները, հաստատում է, իմ կարծիքով, միայն այն, որ կառավարութեան տակտիկը—գրգռել մի ազգութիւն միւսի դէմ—աջողութեամբ պիտի առաջ գնայ, քանի դեռ Կովկասում գոյութիւն ունին ազգայնօրէն առանձնացած քաղաքական կուսակցութիւններ, որոնք իրենք իրենց առաջադրում են ինքնուրոյն նացիոնալիստական նպատակներ“։

Կովկասեան ինքնատիպ մարքսիզմը դեռ շատ անակնկալներ պիտի պատճառէ մեզ պրօֆանների, իր ինքնատիպ սոցիօլոգիական գիւտերով։

Ազգային դրօշակներ չը պէտք է պարզել ազգի անունով առհասարակ չը պէտք է խօսել ու գործել—դա՝ նացիոնալիզմ է և գուցէ... սօցիալիզմի պրօֆանացիա... Օրինակը վարակիչ է, մանաւանդ հայերի մէջ ուր ծանծաղամիտ կօսմօպօլիտիզմը „առաջադիմութիւն“ է անում—և մենք չենք զարմանում, տեսնելով անհատներ, որոնցից իւրաքանչիւրը իր նորընծայական յափշտակութեան մէջ, „ուղղադատան“ թէօրիաներով տարւած՝ կասէ ձեզ, օրինակ, թէ ինքը „մարդ է“ կամ „սօցիալ-դեմօկրատ“ է, կամ՝ Ռուսաստանցի սօցիալ-դեմոկրատ է, և դժկամակութեամբ ու ամաչելով միայն կը յիշատակէ իր ազգային ծագումը,—ճիշտ այնպէս, ինչպէս հին փիլիսոփայութեան նէօ-քրիստոնէական յայտնի շէօլայի ներկայացուցիչ Պլօտէնը ամաչում, կարմրում էր, որ մարմին ունէր, այնքա՜ն սպիրիտուալիզմը, հոգեպաշտական դօգմաները գերել էին նրան...

Ազգային դրօշակներ չը պէտք է պարզել... 1903-ի աշնան չը պէտք էր հրապարակ դալ ազգային պարօլով, թէպէտ և խլում էին ազգի ուրոյնութեան վերջին մնացորդները. յեղափոխական տարրը չը պէտք է կոչէր՝ „կեցցէ՛ հայութեան բռնաբարւած իրաւունքը. „Դաշնակցութիւնը չը պէտք է կազմակերպէր իր խմբերը բիւրօկրատիայի ու թուրք խուժանի դէմ նոյն ազգային նշանաբանի տակ, նա չը պէտք է առաջ մղէր քաղաքներն և գիւղերի հայ ժողովուրդը՝ նոյն վտանգւած հուսաքական գոյութիւնը զէնքը ձեռին պաշտպանելու համար... Այդ բոլորը „նացիոնալիզմ“ է և „Դաշնակցութեան“ այդպիսի միջամտութիւնը, վրաց ս.-դ. օրգանի ասելով, տրամադրում էր „հայ գիւղացիներին՝ ոչ միմասնակցութիւն չ՝առնել ընդհանուր յեղափոխական շարժման մէջ“ (կարծես դա ընդհանուր, հակապետական շարժման մի կրօվի արտայայտութիւնը չը լինէր), այդ բոլորը նացիոնալիզմ է, դրա փոխարէն պէտք էր միայն կանգնել հրապարակի վրայ և զիլ ձայնով գոչել՝—„պրօլետարներ բոլոր երկրների, միացէք“,—և խեղճ հայութիւնը դարման կը ստանար իր ծով ցաւերին... Մենք տեսանք, տակայն, թէ տիեզերական պրօլետարիատի անունով խօսող ինտերնացիոնալիստները, Դաշնակցութեան՝ շօվինիզմի առ-

*) Այդպէս է ասւած վրաց „Սօցեալ-դէմօկրատս“-ի մի յօդւածի մէջ, որ թարգմանւած է ռուսական „սօցեալ-դէմօկրատս“-ի 8-րդ համարում եւ այնտեղից անցած „Բէվոլ. Ռօսսիա“-ի մէջ։

թիւ գլուխ ծեծողները ինչ օգնութիւն տրին մորթւող հայութեանը, „պօգրոմների“ օրերին, և ինչպէս տրդարացրին իրենց սրտաշարժ անտարբերութիւնը...

Հերիք է. ժամանակ է, որ թողնեն սխօլաստիկական մտածողութեան այդ տարաւերժ ու վայրենի ձևերը և չը կաշկանդեն, չը խեղաթիւրեն նրանցով՝ նոր կեանքի կոչւող երիտասարդութեան հարցասէր մտքերը։ Առողջ տրամաբանութիւնը ըմբոստանում է այդ կամայական ու բռնազբօսիկ ֆօրմուլների դէմ։ Նա ասում է, որ կարելի է սօցիալիստ լինել և ամենաջերմ պաշտպան կանգնել իր ազգայնական իրաւունքների ու անկախութեան։ Նա հաստատում է, որ կարելի է ամենաուղղափառ մարքսիզմ դաւանել և հրապարակ գալ ազգային դրշակի ու նշանաբանի տակ, որոշ մթնոլորտում, երբ վտանգ է սպառնում ազգայնութեան ինքնուրոյնութեանը, նրա ազատ ու նորմալ զարգացման։

Ճշմարիտ, ոչ խեղաթիւրած սօցիալիզմը զանազանում է այն ռազմատենչ, աշխարհակալող ու ֆնասակար նացիոնալիզմը, որ վերջին տարիներում գլուխ է բարձրացրել ու այնքան տխուր հռչակ է ստացել Ֆրանսիայում ու Անգլիայում, և այն միւս „նացիոնալիզմը“, որ ոչ այլ ինչ է, բայց եթէ ձգտում ազգային վերածնութեան ու առաջադիմութեան, ձգտում՝ կրթելու և բարձրացնելու հարազատ ժողովուրդը համամարդկային իդէալների ոգով։ Ճշմարիտ սօցիալիզմը նշանակում է, անարդ սիւնին մեխում ոչ այն ազգայնութիւնը, որ սեփական արիւնն է թափում, ազատ, ինքնագլուխ ապրելու համար, այլ այն միւսը, որը տրեան հեղեղների մէջ խեղդել է ուզում ուրիշ ազգերի ազատութեան թռիչքները։ Զափազանց տարրական բաներ են սրանք և վաղուց ժամանակ է հասկանալ։

Հայ դաշնակցականը նոյնպիսի իրաւունքով կարող է փաստաբանել իր ազգայնութեան դատը, որպիսի իրաւունքով մի Բէբէլ կամ մի Պրեսանսէ պատրաստականութիւն կը յայտնեն զէնքը ձեռին ասպարէզ նետուելու՝ հուրաքանչիւրը իր հայրենիքը պաշտպանելու համար։

Հայ դաշնակցականը նոյնքան իրաւունքով կարող է սիրել իր լեզուն, երկիրը, պատմութիւնը, որքան իրաւունքով մի Էնտրազիժան սօցիալիստ Ֆերրի կարող է բացականչել. „Ես շատ սիրում եմ իմ մեծ հայրենիքը՝ Իտալիան և ես կրում եմ զարթ սրտով բոլոր զրկանքներն ու փոթորիկները, յանուն հայրենիքի այդ սիրոյն“...

Այդպէս է հրահանգում իսկական, չը խեղաթիւրած սօցիալիզմը։ Այդ է բուն իմաստը և այն ծանօթ, տարածուած բանաձևի, որի անունն է „ազգայնական ինքնորոշում“ և որը Ռուսաստանի ու Կովկասի սօցիալ-դեմօկրատների աչքում կարծէք մի դատարկ, աւելորդ ֆօրմուլ է, որ ծառայում է միայն ագիտացիական նպատակների և որի մէջ երբէք չը պէտք է դնել որևէ կոնկրետ բովանդակութիւն, այլապէս կ՝ընկնէք նացիոնալիզմի գիրկը և կ՝արժանանաք կովկասեան պապերի ահեղ բանադրանքին... Դա անհաւատալի է, ընթերցող, բայց իրողութիւն է. փաստերի շարքը կարելի է երկարել. սակայն չը հեռանանք մեր հիմնական խնդրից։

*

Առաջ գնանք չարատանջ „պատճառների“ քննութեան մէջ։ Հայ նացիոնալիզմը, մանաւանդ դաշնակցական նացիոնալիզմը, այդպիսով, գործ չունի հայ-թրքական ընդհարումների հետ և մենք սրտանց կը փափագէինք, որ մեր բոլոր դրացիները վարակւած լինէին նոյն տեսակի նացիոնալիզմով, ինչպէս մենք։

Գուցէ մեղաւոր է հայ կապիտալի՞զմը...

Այդ հարցումը տալով, մենք յայտնւում են տնտեսական ֆակտօրի հանդէպ, որը հանդիսանում է շատերի աչքում, իբրև գլխաւոր դրդապատճառ կովկասեան սուայլ ողբերգութեան։ Ոմանք նոյնիսկ գրեթէ բացառապէս ծանրանում են այդ ֆակտօրի վրայ, չը շեշտելով միւս՝ քաղաքական, ցեղական-կրօնական և այլն մօմենտները, կամ երկրորդական ու երրորդական տեղ տալով նրանց։ Այդ էլ, ինչպէս տեսանք, էապէս սօցիալ-դեմօկրատական տեսակէտ է, որ այժմ կը փորձենք քննել աւելի հանգամանօրէն։

Նախ ընդունենք, որ ամբողջ Թուրք ժողովուրդն է հայութեան դէմ կռիւ հրատարակողը և ոչ նրա մի առանձին հատւածը, կամ, ինչպէս սովորաբար ասում են, Թուրք խուժանը, „հասարակութեան Թափփուկը“։ Այդ վերջին պատրանքը դեռ կարող էր տիրել կողմնակի դիտողին արիւնոտ դրամայի սկզբներում, երբ յիրաւի Թուրք ազգաբնակութեան մի ստւար մասը ոչ միայն չէր մասնակցում թալանին ու սպանութիւններին, այլ և եռանդով դիմադրում էր նրանց։ Սակայն օր աւուր, տրեան ալիքի ծաւալելուն հետ, գաւառներում ու քաղաքներում, Թուրք ժողովրդի լայն զանգւածները բնազդմամբ մղւեցին Ոճրի գիրկը և այն՝ իբրև յարձակողական ուժ։ Բացառութիւններ դարձեալ մնացին, անշուշտ, Թուրք տարրի մէջ և նրանք այնքան աւելի յարգելի են մեզ, որքան մնայլ ու յուսահատական է Թուրք ընդհանրութեան մտավիճակը (mentalité),—սակայն, այդ բացառութիւններն էլ միայն հաստատում են ընդհանուր կանոնը։ Մենք ողբում ենք այդ իրողութիւնը, բայց ստիպւած ենք արձանագրել.—այնքա՞ն ծանր ազէտների դիմաց էօֆէմիզմներն ու փափկանկատութիւնները սաղ չեն գալիս և մենք պարտաւոր ենք լիակատար հարկը տալ ճշմարտութեան, թէկուզ և դաժան, անողորմ ճշմարտութեան։

Թուրք ժողովուրդն է իր բէկերով ու մոլլաներով, իր կրթւած ու անկիրթ ներկայացուցիչներով, Թուրք մասսան է, որ հրաժեշտ է տալիս երեկւայ խաղաղ, հաշտ դրացիութեան և դահավիժւում է հայ ժողովրդի վրայ, կեանքի ու մահւան խնդիր դնելով հայութեան առջև...

Այդքան անօրինակ, եզակի, խաշոր հասարակագիտական մի երևոյթ ճիշտ որ չէր կարելի մեկնաբանել սոսկ քաղաքական, պետական գործօնով, սոսկ իշխանութիւնների հայատեաց ղրդումներով, պէտք էր փնտրել այլ շարժառիթներ։ Եւ երբ ուշադիր ու իրազեկ մտքը ուզում է փնտրել այլ կարգի պատճառներ ժողովրդական այդպիսի մի շարժման, նա բնականաբար կանգ է առնում մարդկային ամենապարզ, ամենաընդհանուր տխրժակների վրայ, ստամոքսի թելադրութիւնների վրայ, նիւթական կամ տնտեսական պահանջների վրայ։ Այդպէս է վարւում—և իրաւամբ—սօցիօլոգիայի նորագոյն դպրոցը, մարքսիստական կամ տնտեսական մատերիալիզմի շէջքան, երբ նրա առջև պարզւում են մարդկային պատմութիւնն ալէկոծող ժողովրդական այլազան շարժումները և տիրաբար լուծում են պահանջում։

Այդպէս կամեցան վարւել և մեր կովկասեան մարքսիստները, որոնք Թափով հրապարակ եկան և Թուրք-հայկական պրոբլէմի քննութիւնը ձեռք առնելով, տնտեսական մեթոդը վայր ի վերոյ կիրառելով, սկսեցին աջ ու ձախ հոլովել ծանօթ տերմինները՝ «տնտեսական կռիւ», «դասակարգային կռիւ», «կապիտալիզացիա», «պրօլետարիզացիա»... Սակայն, ինչպէս յաճախ պատահում է Մարքսի էպիգօնների և նորընծայ-աշակերտների հետ,—կովկասեան մարքսիստները հասան անհեթեթ ծայրայեղութիւնների՝ թէ թէօրիական բացատրութեան և թէ գործնական եզրակացութիւնների մէջ, որոնց շարքում մի դառն, ցաւագին զաւեշտականութեամբ փայլում է Թիֆլիսեան օրգանի Թղթակցի այն կլասսիկ յայտարարութիւնը, որ կովկասահայ մտմտալը նշանակեց միանգամայն արդար ցասումով, իբրև տմարդի, անպատիւ, անորակ մի երևոյթ... Յիշեցէք, ընթերցող, „Վօրոշդենիէ“-ի Մ.-ոկսալի Թղթակցին, որը Կովկասեան փոխարքային ուղղած իր զեկուցման մէջ խորհուրդ էր տալիս չը դիմել խիստ, ճշնշող միջոցների Թուրք ազգաբնակութեան դէմ, պատճառաբանելով, որ այդ վերջինը դտնւում է ամենադժբախտ պայմանների մէջ և չէ կարող դիմանալ տնտեսական մրցակցութեան։ „Միլիօնաւոր, ժողովուրդը, ասում էր նա, խրւած կատարեալ ագիտութեան մէջ, չունենալով մի կտոր անշարժ սեփականութիւն, բոլորովին անկարող է տնտեսական կռիւ մղել անչափ աւելի կուլտուրական և տնտեսապէս աւելի ուժեղ ժողովրդի (հասկացէք՝ հայերի) հետ“։

Այդպէս ահա հանճարեղ ուսուցչի անշնորհք, անարժան աշակերտները Թեթեւամտութեամբ խրախուսում են անպատժութիւնը Թուրք հրոսակների մէջ և գիտական դատանանքի անունով նենգաղծում հայի աղեխարշ նահատակութիւնը... Բայց կարճ կապենք. մտաւոր ու բարոյական այլանդակութիւնը այնքան կատարեալ է այդ եղկելի յայ-

տարարութեան մէջ, որ ամէն մեկնութիւն թուում է աւելորդ։

*

„Ցնտեսական“ բաւի իմաստը ճկուն է, առաձգական։ Նա ունի ընդհանուր և մասնաւոր նշանակութիւն։ Ընդհանուր մտքով, եթէ կուզէք, տնտեսական ֆորմուլը կիրառելի է մեր քննելի խնդրում։ Մենք կարողենք ասել օրինակ. որ Թուրքը ժողովրդի լայն զանգուածներ իրենց ընդհանուր մոբիլիզացիայի մէջ հայերի վրայ՝ հրաշալի դարձրեցին այն շատ տարբերական ախորժակներին, որ մենք քիչ առաջ յիշատակեցինք։ Լինելով մեծ մասամբ խեղճ ու չքաւոր, նրանք կամեցել են, պատեհ առիթով, փոքր ինչ հարստանալ, թեկուզ և ի հաշիւ իրենց պէս թշուառ ազգաբնակութեան։ Եւ առաջացել են ջարդեր, աւարներ, որոնք, դէ՛հ, անխուսափելի են թալանի միջոցին...

Տնտեսական բացատրութեան այդ ձևը, ինչպէս տեսնում էք, à la rigueur ընդունելի է, թէև դա շաբլոնական, աղօտ, տարտամ մի բացատրութիւն է, որ ոչինչ չէ բացատրում, որ չէ թափանցում արիւնոտ հարցի խորքերը, չէ պարզաբանում կատաստրոֆի հրէշաւոր ծաւալը, այն սպեցիֆիկ, դժոխային արտայայտութիւնները, որ ունեցաւ Թուրքը ժողովրդի մոբիլիզացեան։

Կովկասեան սոցիալ-դեմոկրատները մատնաւորեցին, կամ աւելի ճիշտ՝ որոշադրեցին „տնտեսական“ տարրը, մի կողմից հրահանգուած մարքսիզմի ֆորմուլներից, միւս կողմից ակամայ ներշնչուած հրապարակի վրայ շրջող նախապաշարումներից, Թուրքը իդեալոգների ու Սուվորինների խրնամքով տարածած զրպարտութիւններից,—սկսեցին խօսել մեկ ժողովրդի տնտեսական ճնշման ու տարկացման մասին՝ միւսի միջոցով, մեկ դասակարգի (հայ բուրժուազիայի) տնտեսական գերիշխանութեան ու ոտնձգութիւնների մասին։

Թուրք ժողովրդի quasi—տարկացումը հայ ազգութեան կամ նրա ուեէ հատուածի ձեռքով՝ պէտք է դիտել իբրև մի անկայուն պարադոքս և յետ մղել առանց երկար ու բարակ բացատրութիւնների։ Թուրքը մասսայի հակահայկական զգացումներն ու գործողութիւնները չեն կարող բղխել հայի տնտեսական ճնշումներից, այն պարզ պատճառով՝ որ նա, Թուրքը մասսան, չէ կարող տեսնել իրականութեան մէջ այդ ճնշումները։ Իր ծայրայեղ տգիտութեան ու կուրութեան մէջ անգամ նա տեսնում է, որ գաւառներում լայնատարած և լաւագոյն հողերը պատկանում են իր կրօնակից աղաներին, որոնք իշխում են ֆէօդալական իշխանութեամբ, ճնշելով և հայ և Թուրք հողագործին. այո՛, անտարակոյս, Թուրքը ամենայետին գեղջուկն անգամ պարզ տեսնում է, որ հայ աշխատաւորը նոյնքան „սեփականատէր“ է, նոյնքան „հողատէր“ որքան և ինքը։ Իրողութիւնը հանրածանօթ է և Թերևս կարիք իսկ չը կայ դիմել ձեռնհաս հեղինակութիւնների։ „Իսկական հայ ժողովուրդը, ասում է կովկասագէտ պրոֆէսոր Մարը, աւելի մեծ չափով պրոլետարիատի (գիւղական պրոլետարիատի) յատկութիւններ ունի, քան թէ Գուրիայի ժողովուրդը“։ Նոյն գիտնականը հետևեալն է ասում Թուրքերի մասին. „մուսուլման աշխատաւոր ժողովուրդը մինչև օրս էլ հեծելով հեծում է համակրօն ֆէօդալների ծայրայեղ ճնշման տակ“. („Պետերբ. Վեդոմոստի“, № 272)։ Կարո՞ղ է լինել աւելի անաչառ կարծիք։

Խոշոր կալուածատերութիւնը իբրև դասակարգ (Grossgrundbesitztum), գոյութիւն ունի ոչ թէ հայերի, այլ Թուրքերի մէջ և, հետևապէս, ազգարարային աշխարհում ժողովրդային մասսաների վրայ ճնշում կարող է լինել ոչ թէ հայ, այլ Թուրք տարրի կողմից։ Երկրութիւն չէ լինի մեր դատողութեան մէջ, եթէ ծանրանանք հայ մանր բուրժուազիայի՝ մանր առևտրականների ու վաշխառուների՝ կեղեքումների վրայ։

Բայց դուք՞ ճնշում կայ հայերի կողմից՝ խոշոր կապիտալի, կամ ինդուստրիայի աշխարհում...

Թուում է, թէ այդտեղ է բանավէճի կենտրոնը, ամենափափուկ ու շոշափելի կէտը։ Այնտեղ, կովկասեան ինդուստրիայի և մետալական աշխարհի սրատումն է, որ նիւթուել է հրէշային դաւադրութիւնը, այնտեղ է, որ նա առաջին անգամ իրագործուեց ողբերգական, համաշխարհային շառաչումով. այնտեղից է, հաւանականօրէն, որ դաւադրութիւնը ճիւղաւորուել է ամբողջ Անդրկովկասում, տարածելով իր հետ և արեան ալիքը... Որովհետև այնտեղ է, որ իր «ազգայնական» գործունէութեան խարիսխ է հաստատել Թուրք կապիտալիստ դասակարգը, նրա ոգասաւոր մամուլը և նրա խնկարկու-իդէոլոգների կուռ բանակը, ամբողջ մահմեդական état major-ը...

Բաղուն սկսել է, Բաղուն Թերևս կարող է և վերջ դնել վիթխարի կոչմարին, եթէ կամենայ... Բնական է, ուրեմն, որ մարդիկ հարց տան, արդեօք այդտեղ, այդ կենտրոնում չէ՞, որ խաղացուում է, իբրև մի ահաւոր կրկէսի մէջ, հայ-Թուրքական անտագոնիզմի մեծագոյն դրաման, արդեօք Բաղուի պայմանների վրայ չէ՞, որ պիտի կառուցանել Կովկասեան արիւնահեղ ընդհարումների պատճառաբանութեան ամբողջ շէնքը...

Եւ դարձեալ—ոչ։

(Շարունակելի)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

ՆՈՐ ՓԱՍՏԵՐ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

ՎԱՆ, Նոյեմբեր 5.

Համիդի նոր հրամանը.—Աստուածային գիւղը.—Ցեղապետի բռնութիւնները.—Ապարդիւն բողոք.—Օմարի լրբութիւնները.—Նորագոյն հալածանքների ցանկը։

Թերևս լսէք էք, որ վերջերս սուլթան Համիդ, իր հաւատարիմ հպատակ հայերին անհունը երջանկութիւն պատճառելու դիտաւորութեամբ, մի հրաման հանեց, որով տրամադրում է 1895—96 դէպքերից յետոյ բռնութեամբ, կամայականութեամբ հայ գիւղերում հաստատուած քիւրդ համայնքների հեռացումը։ Ահա այս հրամանն էր, որ առիթ տուաւ նոր սարսափների հայ ժողովրդի գլխին... խրախուսուած քրդերից ազատելու հեռանկարով, խառը հայ գիւղերը սկսեցին մի անհաւասար կռիւ քիւրդ աղաների և վաշխառուների դէմ։

Շատ հետաքրքրական է գիւղերից մէկի պատկերը։ Թիմարների Աստուածածին գիւղը պատկանում է Շաբուրցի ցեղապետ—աւելի շուտ աւազակապետ—քամալ ոնին։ Յայտնի իր ոճրագործութիւններով։ Թէև պետական օրէնքով արգելուած է այսուհետև մեռնող քիւրդ համիդիէ գայմագամների տեղը իր ցեղից քիւրդ գայմագամ ընտրելը—(գայմագամութիւնը անցնելու է զինուորական գայմագամի ձեռքը, որը պէտք է կրթութիւն ստացած լինի Պոլսում—սրանով նպատակ ունին երևի համիդեական զօրքերը հանել քրդական ցեղական մթնոլորտից և նրան դարձնել սովորական զօրք) բայց վերջերս սա իր հաւատարմութեան և ամենազօր կաշառքի ուժով, արժանացաւ երջանիկ բացառութեան, եղբօր մահուանից յետոյ գայմագամ լինելու բախտին—աշխարհիկ լրջով աղատ շահագործութիւններ անելու իրաւունքին։

Բայց անցնենք Աստուածածին գիւղի պատմութեան, երբ այդ գիւղի հասարակութիւնը ծախելով իր ունեցած չունեցածը, կարողացաւ, կաշառքներով և քրդերի պարտքերը գոցելով, հեռացնել գիւղում եղած 12 տուն քրդերին, այս անմեղ քայլը դուր չեկաւ աղային։

Հակառակ կառավարական կարգադրութեան՝ 12 տան փոխարէն 15 տուն նոր և աւելի բարբարոս քրդի տներ հաստատեց այդ գիւղում... բայց երանի թէ դա միակը լինէր։ Գիւղացիներից վրէժ լուծելու համար, նա դիմեց և հետևեալ միջոցներին. օգոստոս ամսին այրել տուեց նոյն գիւղացի Սօղոմոնի 300 խուրձանոց խոտի դէզը, իսկ սեպտեմբեր 21-ին այրել տուեց կըրկին նոյն գիւղի 11 դէզ խոտը և անօթութեան մատնեց ամբողջ գիւղի տաւարն ու մալը։ 20-ին սեպտեմբերի, խոտի դէզերի վառվելուց մի օր առաջ, Քայիմ բէկը մտնում է նոյն գիւղը ամբողջ հասարակութեան առաջ, հետևեալ բարձրակոչ յայտարարութիւնն է անում...

—Տիրամէր (Աստուածածին) իմ գիւղն էր և ժողովուրդը իմ ժողովուրդն էր։ Առաջները մարդիկ միամիտ էին և իւրաքանչիւրը տալիս էր ամենաքիչը տարեկան 20—30 ոսկի դատերի համար և նոյնքան կաշառք ուրիշ գործերի համար։ Ահա երկու տարի է, ինչ դուք միաբանել էք ֆեդայիների հետ և ձեր դատերն և վէճերը ձեր մէջ կը վերջացնէք. այդ բաւական չէ, կը համարձակէք իմ ծառաներին ձեր գիւղից հեռացնել տալ։

—Տեսնենք, այդ շատ թանկ կը նստէ ձեզ վրայ, և իսկապէս թանգ նստեց. միւս օրը վառեցին գիւղացիների խոտերը։

Գիւղացիք քաղաք գալով, բողոքեցին կուսակալին և դիմեցին հիւպատոսների օգնութեան։ Բայց ո՞վ է լսողը...

Անցեալ օրեր Հայոց-Ձորի Աստուածաշէն գիւղացի Կարապետ Մելիքսեդեկեանը, մի երեխայի հետ առաւօտեան դէմ քաղաք գալիս, պատահում է յայտնի աւազակապետ Օմար-Օնբաշուն, սա այն յայտնի Օմարն է, որ դէպքից առաջ այնքան դիւային շարչարանքներով սպանեց Կուռուբաշ գիւղացի 4 հայի, իսկ մի քանի ամիս առաջ էլ շատախցի կանանց, որոնք քաղաքից գիւղ էին գնում. բռնում, բռնաբարում է ու ծամերը կտրում, խեղճ զոհերը հազիւ են ազատւում լրբի ձեռքից։ Դէպքի ժամանակ սրա գործած չարիքները նկարագրութիւններից վեր են. ահա այդ սրիկան է, որ ճանապարհին բռնում է Աստուածաշէնցի Կարապետին, վրան գոռալով.—„դու գտել ես իմ կորցրած դրամի քիսէն, որի մէջ եղել է մի ոսկի, 2 մէջիտէ և 10 ղրուշ դրամ. այս րոպէիս իմ դրամը տուր“։ Գիւղացու աղաչանք պաղատանքը և իրաւացի պատճառաբանութիւնը, որ ինքը գիշերով չէր կարող գտած լինել նրա քիսէն, չի ազդում քրդի վրայ. ճանապարհից հանում է հային և հրացանը շտկելով, ուզում է սպանել։ Կարապետը կարողանում է համոզել քրդին, թէ “երթանք շրջանի միւդիրի քով, թո՛ղ նա դատէ մեզ“։ Գնում են միւդիրի քով. նա հոն չը լինելով. գործը քննում են ոստիկանները և առաջարկում հային, որ երդմամբ հաստատէ իր անմեղութիւնը։ Ահա սկսում է երդման սովորական պրոցէսը—„ես իմ հոգին, ես իմ Աստուած, ես այդ քիսայից խաբար չեմ“։ Բայց Օմար օնբաշին, այդպիսի երդումներով գոհ չէ մնում և ինքը իր կողմից առաջարկում է մի օրիգինալ, բայց բոլոր սրբութիւնները ոտքի տակ տուող ձև։—թող, ասում է, հայը իր բերանով շան լակոտը բռնէ և տանէ իրենց եկեղեցու սեղանի վրայ դնէ ու այնպէս կծէ շան պարանոցից, որ արիւնը ցայտէ սեղանի վրայ,—միայն այն ժամանակ ես կը հաւատամ նրա երդման անկեղծութեան, այլապէս նրան պիտի սպանեմ... Ոստիկանների հսկողութեան տակ կարապետը գալիս է քաղաք և բողոքում ուր հարկն է. լսող չի լինում, խեղճը դատապարտուած է քաղաքում մնալու, որովհետև գիւղ գնալուց պիտի սպանէի, իսկ նրա ընտանիքը և երեխանները ի՞նչ դրութեան մէջ են, այդ էլ դուք հասկացէք...

Ընթերցողին ձանձրոյթ չը պատճառելու համար, ներկայացնեմ մի փոքրիկ ցանկ վերջերս պատահած դէպքերի մասին։

1. Աղոս գիւղի մօտ սպանել են կարճկանցի քիւրդ ջանբէզարները Առանցի Մնօին. սա իբրև նաւավար գնացել էր այդ կողմերը. թուրք „ջանբէզարները“ ճանապարհին նրան բռնում թալանում են մերկութեան աստիճանի հասցնելով և կեանքը երեն բաշխելով՝ ճամբայ են դնում. բայց խեղճ Մնօն 3 քայլ չարած, յետևից դնդակ է ստանում ու տեղն ու տեղը մեռնում։

2. Բերդակ գիւղացի մի հայ, իր արտում ցանք անելիս է լինում. Սևակբոկ գիւղացի մի քիւրդ յետևից քարով ջախջախում է խեղճ հայու. գլուխը. մարդասպանը ազատ պտտում է...

3. Վանեցի Միհրան ճզմաճեանին, իրենց այգում աշխատելու ժամանակ, սպանում է դրացի ջանբեզար տաճիկներից։ Երբ ոստիկանները քննութեան են գնում և հարց ու փորձ անում, մի տաճիկ երեխայ անմեղութեամբ կանչում է։ „Ես գիտեմ ով է սպանել—„Կօմիսէր Աբօն յարձակւում է երեխայի վրայ և գոռում. „Շան լակոտ, ձայնդ կտրիր, դու ի՞նչ գիտես“...

4. Բերկրի քով իր արտը ջրելու ժամանակ քրդերից սպանուել է Պոտի գիւղացի մի հայ։

5. Անցեալները Վանից Գեա՛վուր գնալիս—քիարվանի հետ—սպանուել է գիաւուրցի մի երիտասարդ, Տիգրան անունով։

6. Փոքր առաջ Լիմ և կտուց անապատների բաղաքում եղած խանութապանների գլխին մի լաւ խաղ խաղացին։ Երկու անապատները 500-ական ոսկի տուրքի պարտք ունին (Տաճկաստանում վանքերը ազատ չեն ընդհանուր տուրքից) վանքերը տնտեսական մեծ ճգնաժամի մէջ են. չը կարողանալով նրանցից մի բան պոկել, բանտարկեցին խեղճ խանութպաններին և ծեծի ու բռնութեան տակ, գանձեցին առաջիկայ 906 և 907 տարւայ խանութի վարձերը... Վանքերի վանահայրը հեռագրով զեկուցում է տուել Ջատերաբի էֆէնդուն և նամակով իր հրաժարականն է ուղարկել...

7. Տօնօ գիւղում (հայ, ասորի քիւրդ) այրել են Հայրօի Մովսէսի 300 խուրձանոց 2 դէզ խոտը...

8. Վերջերս բռնեցին 10-ի չափ անմեղ քաղաքացիներ, որոնց մեղադրում են այս կամ այն յեղափոխական գործողութիւնների մէջ մասնակցելու համար։

9, Սրանից քիչ առաջ դատւում էր մի հայ սրիկայ-մատնիչ։ Սա մի քանի տարի առաջ յայտնի Փուզիա Հիւսնիի թելադրութեամբ կեղծ յեղափոխական նամակներ էր գրում այս կամ այն հայու ստորագրութեամբ և անմեղներին կրակի մէջ ձգում. մի թիւրիմաց բացառութեամբ բռնւում է և դատի ենթարկւում։ Դատարանի առաջ հայը բացարձակ կերպով խոստովանում է, որ ինքը այդ գործողութիւնները կատարել է Հիւսնիի

թելադրությամբ, բայց տաճկական անաչառ դատաւորը կարևորութիւն չի տալիս նրա յայտնութիւններին և 3 տարի բանտարկութիւն է վճռում այդ լակոտին. մի քանի օր առաջ ազատելով, կրկին գտնում է Հիսնին և նորէն սկսւում են հին պատմութիւնները, կրկին բռնւում է. երբէք, երբ պէտք է վերջնական վճիռը լինէր, տղան դիմեց դատարանի նախագահին յայտնելով, որ ինքը առանձին ասելիքներ ունի նրան, և խնդրում է դատի յետաձգումը: Ի՞նչ ասել կ'ուզէ, ուրախութեամբ ընդունւում է այդ հաւատարիմ խընդիրքը... Երևի Հիսնին և Հաթում բէկ կոչեցեալ սրիկաները կը միջնորդեն և կազատեն իրենց տաղանդաւոր Մուխլիրին (մտանիչին)... Նորէն կը սկսի հին մեղրդրման:

10. Հայերից աղջիկ և կին փախցնելը հին սովորութիւն է. վերջերս քրդերը փախցրել են Զարան գիւղացի Զաքօի կնոջ. խեղճը չը դիմանալով, փախել ապաստանել է հայ վանքերը. քրդերը եկել են այդ կնոջ հօր ոչխարները տարել, պահանջելով որ կինը բերեն յանձնեն իրենց և ոչխարները յետ առնէին:

11. Քաբաբեկ գիւղացի մի հայի տուն թալանել են քրդերը հետևեալ պատճառաբանութեամբ. իրենցից սպանուել է մի քիւրդ, սպանուածի դիակը բերել ձգել են հայի դրան առաջ և բողոքել, ասելով, որ „սպանել է քո տղան, Ալն". վերջինը 3 տարի առաջ անցել է Ռուսաստան: Ամբողջ տան հարստութիւնը և կանանց տարել են իբրև արիան գին. կառավարութիւնը մատը մատին չտուեց, տան տիրոջ տղան մի կերպ ազատելով փախել է քաղաք և անօթի ծարաւ փողոցները կը պտտի...

Եւայլն, Եայլն, Եայլն:

ՀԱՅ—ԹՐՔԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

ՎԱՐԱՆԴԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Ասկերանի դէպքերը

I

Յիշում եմ... Վազգէնը տիֆով բռնուած, հիւանդ պառկած էր Այգեստանում, դերձակ Վարդանենց տանը, և մէջ ընդ մէջ զառանցում՝ էր... Դաշնակցութեան այդ կրակոտ գոհարը, երկար վիճաբանութիւնից յետոյ, համաձայնել էր թողնել առժամապէս կուիւն ու ձմեռն անցկացնել գաւառներում. սակայն երկու օրւայ ընթացքում հանգամանքները փոխուեցին և սեպտեմբեր 11-ին Աղուիսակորից հրացանների բոմբիւններն Այգեստանը դղրդացրին: Վազգէնը, որ մինչև այդ ժամանակ պլչած, անշարժ պառկած էր, յանկարծ նստեց անկողնում, աչքերը յառեց դէպի Աղուիսակոր և մի անմեկնելի ժպիտ բերանին՝ մրմնջաց.— „կռիւ, կռիւ..."

Տարիներ են անցել, բայց ես դեռ յիշում եմ, դեռ լսում եմ դողդոջուն ձայնով արտասանած այդ երկու բառերը: Վազգէն կռիւ էր ցանկանում և այդ հասկանալի էր, որովհետև լլկանքների, բռնաբարութեան, աւերանքների երկրում լոկ գնդակներին կարելի է ապաւինել, լոկ հրացաններով կարելի է բողոքը լսեցնել տալ:

Բայց այդ Տաճկա-Հայաստանում էր, ուր իւրաքանչիւր քար հայի արեան կաթիլներով է ողողուած, ուր պատուհաս է գեղեցիկ հարս ու աղջիկ ունենալը, ուր կեանքի, գոյքի ապահովութիւն բառերը երևակայութեամբ միայն պէտք է հասկանալ: Այդ Տաճկա-Հայաստանում էր, Վազգէն իրաւունք ունէր „կռիւ" աղաղակելու. բայց ինչո՞ւ Կովկասում, քրիստոնեայ, իսլամ քաղաքակիրթ Ռուսաստան կոչող տէրութեան հովանաւորութեան տակ ևս հայը դադարել է- „գիրք, լրագիր"—կանչելուց ու՝ „կռիւ, կռիւ" է աղաղակում... Ինչո՞ւ...

Նայեցէ՛ք, ծուխը թանձր օղակներով այս ու այն կողմից դուրս է սողում ու պատերը լիցնում. խորին մթութեան միջից հսկայական խարոյկները լուսաւորում են շրջակայ ձորերն ու դաշտերը... հայկական գիւղերը են դրանք. վառւում են: Նայեցէք, եկեղեցու բակում մանկահասակ կանայք ու ծծկեր երեխաներ թափուած են միմեանց վրայ, արիւնը հոսել ու նրանց տակին թուխ-կարմիր ղանգուած է կազմել: այդ մեր քոյրերի, մեր եղբայրների արիւնն է: Իլ կարելի՞ է ասել թէ ինչո՞ւ համար ենք „կռիւ" գոչում: Այո՛, կռի՞ւ ամեն օր, կռի՞ւ ամեն ժամ, որովհետև քրիստոնեայ Ռուսաստանը մահմէդական Տաճկաստանի ճակատից հայկական կոտորածների դալինները է ուղում խլել:

Բագու, Բալախանի, Նախիջևան, Երևան տեղի ունեցած թուրք-հայկական ընդհարման արհաւիրքը մղձաւանջի պէս ծանրացել էր Ղարաբաղի վրայ ևս, և այնտեղ ամիսների ընթացքում ջղային դրութեամբ սպասում էին ընդհարման արձագանքներին. այնտեղ ամիսների ընթացքում հայ ժողովուրդը Դաշնակցութեան որոշ ծրագրով առաջնորդելով՝ պատրաստում էր ցոյց տալ, որ կառավարչական զանազան զզուելի ինտրիգաների ղոհ գնալու տրամադրութիւն չունի. որ ընդունակ է կուելու, որ ցանկութիւն չունի մնոնելու:

Ու ահա՛ օգոստոսի 8-ին փոթորիկը պայթեց. թուրքերը հայ ճանապարհորդներին փակեցին Աղդամում: սակայն Շուշին դեռ լուռ էր. դեռ շարունակւում էր սպասողական-լարուած դրութիւնը: Բայց այնտեղ ևս խօսեցին հրացանները և օգոստոսի 16-ի իրիկունը մենք ստացանք Շուշուց հրահանգ՝—փակել Ասկերանը Շուշի արշաւող թուրքերի առաջ:

Օգոստոս 17-ին խէչօի 30 ձիաւորով անցանք Ասկերան:

Ռուս-պարսկական պատերազմների ժամանակից է հռչակուած Ասկերանը: դա մի լայն կիրճ է, որի արանքով կարկառ գնան է հոսում: իսկ գետի աջ և ձախ ափերից իջնում են ալիքաւոր բլրակների կոտակումներ, որոնց վերջին ծայրերը մխում են գետի այս և այն ափին. ահա հէնց նրանց հանգման կէտերում են կառուցուած մարտկոցները, որոնց գլուխը գործի յա-

ջողութեան գրաւական էր համարեա։ Որովհետև մարտակոցները երկու մասի են բաժանուած, մի մասը Խաչէնում է գտնուում, միւսը Վարանդայում, մենք յարմարութիւն ու հնարաւորութիւն չունենալով Խաչէնին ևս բաժին հանելու մեր ուժից, գրաւեցինք միայն Վարանդայի հողում գտնուող մարտկոցները։

Նայեցինք ներքև. Սէյիրդու ուռենիների տակից խաղս էլած Թռան Թուրք ձիաւորները, Ակերանն անցնելու. խստիւ պատուիրելով, որ ոչ ոք հրացան չարձակէ, այնքան սպասեցինք, որ Թշնամին գնդակ հասնելու չափ մօտեցաւ մեզ. հրացանները որոտացին. Թուրքերը յետ խաղացին ու նորից „Եա՛ Ալի՛“ գոռալով, վրայ պրծան, բայց այս անգամ էլ յետ մղեցին ու ձիաներից իջնելով, ցանկացան ձորակներում դիրքեր բռնել մի ժամի չափ իրանց դիրքերից կռուելուց յետոյ, տեսնելով, որ ոչ մի յաջողութիւն չեն ունենում, ձի նստեցին ու գրոհ տուին դէպի Խրամօրթ ու Խանաբադ գիւղերը, բայց երկու ժամ կռուելուց յետոյ, այնտեղից էլ յետ նահանջեցին կորուստներով։ Ժամը 2-ին Խ-ն հինգ ձիաւորով անցաւ գետի միւս ափը, Խաչէն, Խանաբադ, Ղլիչբաղ և Խրամորթ հայ գիւղերն այցելելու ու նրանց սիրտ տալու։ Ժամը 4-ին մօտ՝ Թուրքերն ստուարացած, թիւով մօտ 500, մի կատաղի ոռնոցով, աննպատակ հրացանաձգութեամբ, Թռան դէպի կիրճը, Շուշի անցնելու համար։ Տեսնելով, որ Թշնամին վճռել է, թէկուզ շատ զոհերի գնով, Ակերանի շղթան պատռելու, զինուորներից մի տասը հոգի իջեցրի դիրքից ու բոլորովին մօտեցրի խճուղուն, ապա սկսեցինք երկու կողմից գնդակներ տեղալ. հէնց այդ միջոցին էլ Խաչէնու կողմից վրայ հասաւ Խ-ն, և նա էլ միւս կողմից սկսեց գնդակոռել Թշնամուն. կէս ժամ դիմադրութիւնից յետոյ Թշնամին վերջնականապէս յետ մղուեց, մինչև միւս առաւօտ չերևալու համար։ Այդ օրը մեր գործը բաւական յաջող անցաւ, իրիկնադէմին իջնող քոչորներից էլ խլեցինք 70 ձի։

Օգոստոսի 18.

Լուսացաւ. Աղդամի, Սէյիրդուի, Մազանուի, Շէլլուի և այլ կողմերից բազմաթիւ ձիաւորների ծայրը բացուեց. Նրանք գալիս էին ու գալիս և վերջը չէր հասնում. եկան, հաւաքուեցին Հասան-Աղի քարավանսարայի մօտ գտնուող Թրքական հանգստարանն ու մի մեծ շրջան կազմեցին։ Քարող խօսող կար, թէ ինչ, չիմացանք. միայն մէկ էլ տեսանք, հազարաւոր ձիաւորները երկու մասի բաժանուելով, ձախ թևը ծռեց դէպի Նախիջևանիկ, փիրջամալ գիւղերն, իսկ աջը՝ դէպի Շուշի։ Պրութիւններս ծանրացաւ. 30 հոգով ինչպէս կարող էինք այդպիսի մի զինուած բազմութեան առաջն առնել։ Երկու հոգի ուղարկելով մօտակայ գիւղերից օգնութիւն հասցնելու, ես հինգ հոգով դուրս թռայ դէպի Նախիջևանիկ արշաւող թուրքերն, իսկ Խ-ն մնաց ամրոցում, աջ թևի առաջն առնելու։ Նախիջևանիկ գիւղ գէմ-ու դէմ, Զրմախուր կոչուած թումբը գրաւելով, արշաւող թուրքերի առաջը կապեցի. բայց անպիտանները նորից բաժանուեցին երեք մասերի և, մի քիչ յետոյ, արդէն պիտի շրջապատուէի, եթէ գիւղից քսան հոգի չը հասնէին ինձ։ Մի փոքրիկ շղթայ կազմելով. Թշնամուն նորից հաւաքեցինք մի կէտում և, կամաց-կամաց օղակը սեղմելով, թուրքերին սկզբում նեղեցինք, ապա՝ հալածեցինք նորից մինչև իրենց նախկին տեղը, հանգստարանը։ Խ-ն էլ իրա վրայ յարձակուող ձախ-թևեան թշնամուն ջարդելով՝ էլի յետ էր մղել։ Գործը խիստ յաջող էր. սակայն Խ-ի մի յանդուգն քայլը մի քիչ վնասեց կռուի յաջող ելքին։ Նա ոգևորուելով թուրքերի փախուստից, 5 ձիաւորով դուրս թռաւ դիրքից և ընկաւ փախչող թշնամու ետքից. բայց թուրքերից մի 100 հոգի թթենիների տակ իսկոյն դարան են մտնում և հէնց որ Խ-ն դիրքից բաւական հեռանում ու հաւասարուում է դարանակալներին, վերջիններս 30—40 քայլի վրայ կրակ են բաց անում. սարսափը պատեց մեզ. բոլորին արդէն նահատակուած էինք հաշուում. մէկի ձին ընկաւ, բայց զինուորներից միւսն իսկոյն նրան գաւակն առաւ ու թռցրին ձիանքը. թուրքերը սովորական „Եա՛ Ալի“-ն գոռալով, ընկան նրանց յետևից. ամրոցի դիրքը պահող մեր տղերքը կարծելով, որ բանը բանից անցած է արդէն, դիրքը թողեցին ու վերև քաշուեցին, որոնց և հասաւ Խ-ն իր 5 ընկերներով։ Ցառաջխաղ թուրքերն իրենց ազատ զգալով, հարայ-հրոցով եկան ու մի 100—150 հոգու խմբով անցան դէպի Շուշի։ Բայց շուտով ուշքաբերուեցանք. նորից Խ-ն գրաւեց իր դիրքը, ես էլ իմ խմբով իջնելով ուղղակի Շէլլու թըրքաբնակ գիւղի գլուխը, թուրքերին բաժանեցի երկու մասի, որոնց միջով սեպաձև մտաւ և նոր հասնող օգնական խումբը, թշնամին ստիպուած եղաւ յետ քաշուել։ Հեռադիտակը ցոյց տուաւ, որ նրանք բոլորովին հեռացան կռուի դաշտից և Աղդամ՝ ապաստանեցին։ Ջնայելով գործի տաք լինելուն, մեր զինուորները յաջողեցին էլի մի 18 ոչխար խլել հեռուից իջած և Ակերանով անցնող քոչորներից։ Այդ երկու օրը խլեցին թուրքերից մի քանի հրացան, իսկ սպանուածները հաշուել չէինք կարող, որովհետև դիակները իսկոյն քաշում, տանում էին. բայց ի նկատի ունենալով, որ մեր կտրիճները բաւական վարպետօրէն գնդակներ ուղարկել գիտէին և յաճախ մեր աչքով տեսնում էինք ձիաքլոր եղողներին, ապա կարելի է վստահօրէն ասել, որ վնասն զգալի պէտք է եղած լինէր։ Օգոստոսի 19.

Խ-ն առաւօտեան անց կացաւ Խաչէնու կողմը, տեղեկանալու, թէ Համազասպը եկե՞լ է արդեօք. դեռ երկու օր առաջ մեր զինուորական խմբապետներից մէկին մի զինուորի հետ ուղարկել էինք Խաչէնու գիւղերը, նրան կանչելու, որպէսզի շտապէ իր ուժերը միացնելու մերիներին, Ակերանը պահպանելու համար։ Ժամը 10-ին մօտ՝ հեռուից նկատուեց մի ձիաւոր, որ մեզ փափխով իմաց էր տալիս հրացան չարձակել։ Երկու մարդ հետս վերցնելով, մօտեցայ նրան։ Դա մի ռուս սարաժնիկ էր, որ եկել էր հաղորդելու, թէ՝ Շուշում արդէն հաշտութիւն է կայացել, հայերը յաղթել են, բայց հրդեհն աւերել է հայերի հարուստ թաղն ու Նահանգապետն էլ եկել է և պատուիրում է Ակերանը պահող հայերին՝ երբէք չկպչել փոստին ու քոչորներին, բայց զինուած մեծ խմբեր թուրքերից չթողնել անցնել դէպի Շուշի։ Նա գնաց, նրանից յետոյ խճուղու վրայ երևաց մի կառք. հրացանի մի արձակումով նշան տուինք և կառքը կանգնեց. իսկոյն երկու սարաժնիկ մի քիչ մօտեցան, ապա ինչ որ գոռացին, բայց ասածնին լսելի չեղաւ. Նրանց մօտ կանչեցինք. մօտեցան ու յայտնեցին, թէ կառքը փոստն է տանում Լէլիս, Շուշում հաշտութիւն է կայացել և կրկնեցին նոյնն, ինչ որ Նահանգապետն էր ասել։ Փոստը բաց թողեցինք։ Ճանապար-

հները մեր ձեռքին էին, ո՛չ մի թուրք այլևս չէր երևում, միայն մէկ-մէկ մենք էինք դուրս գալիս և խճուղով վեր ու վար քշում, չորս կողմերիս հետաքննելու համար։ Կէսօրից յետոյ անց կացաւ մի կառք, շրջապատուած կօզակներով. դա Շէյխ-ուլ Իսլամն պէտք է լինէր, որովհետև սարաժնիկին ասել էր, թէ՝ գալու է Շուշի։ Յետոյ ասել էին, որ իբրև թէ Ասկերանում մենք հրացաններ ենք արձակել Շէյխ-ուլ Իսլամի վրայ, բայց դա մի լիրբ սուտէ. ո՛չ մի հրացան չի արձակուել։ Այդպէս անցաւ մինչև երեկոյ, առանց ընդհարման։

Օգոստոսի 20.

Խ-օն վերադարձաւ մեզ մօտ, յայտնելով, որ Համազասպն արդէն եկել է և գտնուում է Խանաբադ գիւղում։ Այդպէս ուրեմն այժմ Ասկերանը երկու կողմից սեղմած էր և թուրքերի էինք սպասում։ Մինչդեռ ես ու Խ-օն մեր զինուորական խմբապետներով առանձնացած՝ ծրագրում էինք անելիքներս, գիրքի պահպանը դռռաց. „կանգնի՛ր։“ Վեր թռանք ու տեսանք, որ ինչ որ կառավարութեան պաշտօնեայ անցել է գետն ու երկու սարաժնիկով գալիս է դէպի մեզ։ Երբ „կանգնի՛ր“ հրամանը լսեց, սարաժնիկներին թողեց և ինքը մենակ մի քիչ էլ առաջ անցնելով, ցած իջաւ ձիուց և գլխով կանչեց։ Մենք երկու զինուորներով հասանք նրա մօտ։ Պրիստաւ էր. „Պարոնայք, ասաց նա,— հաշտութիւնն արդէն կայացած է. նահանգապետը խիստ բարկացել է, որ Շէյխ-ուլ Իսլամի վրայ գնդակ էք արձակել. այժմ խնդրում եմ, այստեղ աղմուկ չբարձրացնել. թողնել, որ քոչորներն ազատօրէն վերադառնան. նրանց ապրանքները ձգել, Խօջալլուի մօտ իրար գլխի են թափուել, կարող են կոտորուել, տնտեսական վնասը ձեզ կը հասնի. Շուշուց թուրք ձիաւորները պիտի վերադառնան իրենց տեղերը. նրանց չկպչէք. դուք կարող էք ձեր գիրքերն առ այժմ միայն պահել, որպէսզի եթէ զինուած թուրք խմբեր փորձեն Շուշի անցնելու, որ անհաւանական չէ, առաջն առնէք“։ „Շուշի հաշուել են, մենք չենք հաշուում.“ պատասխանեցինք մենք. եթէ ձեզ հաւանական է թւում, որ կարող են զինուած խմբեր անցնել Շուշի, էլ ի՞նչ հաշտութիւն“։ Չէ, պատասխանեց նա,—խորհուրդս բարի է ես չարամտութեամբ չեմ խօսում. գրեցէք Համազասպին, որ նա նոյնպէս այն կողմում հանգիստ կենայ“։—„Լաւ, կը մնածենք և, երբ հնարաւոր լինի, չենք շարժուի“։ Պրիստաւը գնաց. իսկոյն մարդ ուղարկեցինք միւս ափը, Խանաբադ, յայտնեցինք Համազասպին, որ Շուշում հաշտութիւն է կայացել.—Բայց մենք դեռ չենք հաշուել, պատասխանեց Համազասպը և տոմսակով խընդրեց, որ մեզնից մէկն ու մէկն անցնի, նորից զինուորական խորհրդի նստելու և ծրագիր կազմելու։ Երեկոյեան Խ-օն տասը ձիաւորով անցաւ, իսկ ես գիրքում քսան ձիաւոր թողնելով, վերադարձայ մօտակայ գիւղն, այնտեղից գիշերով մարդիկ ուղարկեցի շրջանի զինուորական խմբապետին կազմ ու պատրաստ լինելու, որովհետև կարող էր պատահել, որ յարձակողական գիրք բռնէինք։

Օգոստոսի 21.

Առաւօտեան Խաչէնի կողմում, Խանաբադի մօտ վառուեց Հասան-Աղի հրաշալի ամարանոցը։ „Տղե՛ր, դարձանք մերոնց, Խաչէնում հաշտութիւնը կնքեցին, իսկ Վարանդան դո՞ւրսը պիտի մնայ“։—Տասը ձիաւոր իսկոյն դուրս թռան և Ջհան-Բողլար թուրք գիւղը, որի բնակիչներն արդէն փախած էին, չորս կողմից վառեցին. այժմ հաշտութիւնը կատարեալ էր։ Խ-օն վերադարձել էր, բերելով մեր անելիքի ծրագիրը. Համազասպը պէտք է փակէր շղթայով Խաչէնի կողմը խճուղու երկարութեամբ, մենք էլ Վարանդայի կողմից՝ մինչև Զայ-Խաչա կոչուած տեղը, հաստատ որոշելով, որ ո՛չ մի գնացող կամ վերադարձող սաղ-սալամաթ դուրս չպիտի պրծնի այդ թակարդից։ Տարաբախտաբար, դա միակ միջոցն էր—էապէս ինքնապաշտպանութեան միջոց—թուրքերին սանձելու և նրանց բարբարոսութիւններին վերջ դնելու համար։

Օգոստոսի 22.

Առաւօտեան արդէն կազմ ու պատրաստ ենք. իւրաքանչիւր զինուոր իր տեղն է, և սպիտակ-կարմիր խաչով դրօշակը Վարանդայի ու Խաչէնի կողմից պայմանական, „պատրաստ ենք“ նշաններն են անում։ Սիրտ ի թինդ սպասում ենք։ Շուշուց վերադարձող անհամար ձիաւորներ եկել խմբուել են Խօջալլուի մօտ և սարսափում են Ասկերանը մտնել. նրանք արդէն լսել են, որ ամսի 17-ից դէսը հայերն այստեղ թուրք են որսում. լսել են, և չեն համարձակւում նոյն իսկ Մօսինի գընդակի սարածութեամբ մնտենալու։ Բայց ահա՛ մի 30 հոգի, կօզակներով շրջապատուած, պրիստաւն էլ առաջներին, եկան. չարժէր 30 հոգու համար մեր ծրագիրը փչացնել։ Մենք անշարժ մնացինք, թուրքերն ապահով անցկացան։ Կօզակները վերադարձան, թէ ուր գնացին, չիմացանք. միայն այս տեսանք, որ 11 հոգի թուրք, ինքնավստահ կերպով, եկան ու մտան ամրոցի պատերի մէջ, որտեղով ճանապարհն է անցնում։ Իսկոյն չորս կողմից պատելով, առանց հրացան արձակելու, դրանց այնպէս յանկարծակի բերինք որ նոյն իսկ աղաղակելու ժամանակ չունեցան և 11 դիակներ, խանչալներով սրախողխող եղած, թափուեցին պատերի ներսը։ Դիակներն այս ու այն կողմ քաշեցինք և մեր նախկին դիրքերը բռնեցինք։ Հեռուում խմբուած ձիաւորները տեսնելով, որ երկրորդ խումբն էլ անցկացաւ և ոչ մի հրացանի ձայն չեղաւ, մտածեցին, որ ճանապարհը բաց է, և երկու հարիւրի չափ ձիաւոր, պրիստաւի առաջնորդութեամբ թռած եկան։ Այնքան սպասեցինք, որ նրանց պոչը դուրս եկաւ Ասկերանի պատերից և էէնց որ ամբողջ խումբը մտաւ մեր օղակի մէջ, չորս կողմից դժոխային կրակ բաց արինք։ Պրիստաւն զգալով գործի լրջութիւնը, խոհեմաբար դուրս թռաւ ճանապարհից ու քշեց դէպի Խանաբադ, իսկ մենք սկսեցինք յարձակումը բառիս իսկական իմաստով։ Թուրքերն աջ ու ձախ կողմերից կրակի հանդիպելով, ցանկացան յետ քաշել. բայց ճանապարհի բերանը խցանկացան յետ քաշել. բայց ճանապարհի բերանը խցանի պէս փակուած էր ու նրանց ճակատին որոտացին յետ տապահների հրացանները. թուրքերը շուռ տուին դէպի ձախ, էլի հրացանների գնդակներ տեղացին ճակատներին. շուռ տուին դէպի աջ, նոյնպէս կրակի հանդիպեցին. ցանկացան քշել դէպի Հասան Աղի քարվանսարան, սակայն նախօրօք տղերքն այնտեղ թրքաց գերեզմանոցում դարան էին մտել, և թուրքերին գնդակահարեցին դարան էին մտել, և թուրքերին գնդակահարեցին, յետ քշեցին դէպի վեր։ Մի խօսքով՝ մի սոսկալի պար էին պարում թուրքերը և նրանցից ո՛չ ոքի ժամանակ չտուին նոյնիսկ ուսից հրացանը ցած բերելու, մի փամփուշտ արձակելու։ Երկու ժամից յետ

տոյ ամբողջ դաշտը, ճանապարհի երկարութեամբ, լցուել էր մարդկանց և ձիերի դիակներով. ես միայն վեց ձիաւոր տեսայ, որ ընդհանուր կոտորածից ճողոպրելով, փախան դէպի Ղուրդերը: Կռիւը դեռ կիսով վերջացած, Սէյիթտուի մօտից, մեզնից մի գնդակի տարածութեամբ, հնչեց զինուորական փողը. բազմաթիւ հետեւակ զինուորներ, արագ քայլեր առած, գալիս էին դէպի մեզ. էլ ժամանակ չունեցանք ընկածների զէնքերը հաւաքելու. 22 հրացան կարողացանք հաւաքել: Համաղասպը քաշուեց դէպի ճանապարհի աջ կողմն, իսկ մենք, դէպի ձախ: Վերադարձին մեր զինուորներից մէկը նկատեց, որ մի թուրք դետափին գտնուած զաղալի ծակն է ցանկացել մտնել, կիսով չափ խցկուել է, բայց կէսը դուրսն է մնացել. դաշոյնահար անելով նրա ոտները, ծակից դուրս քաշեց, վերցրեց ձեռքի այնալուն, թուրքին էլ սպանեց: Տիսուր փաստեր...

Թուրքերի կորուստը շատ մեծ էր. մեծ էր նրանով, որ շատ նշանաւոր բէկեր ևս այնտեղ իրանց համար գերեզման գտան և այլ ևս աւազակախմբեր կազմել ու հայերի տները քանդել չէին կարող. մենակ Ալփամաուից 3 նշանաւոր բէկեր էին սպանուել, որոնցից մէկը Խազալինսկի յայտնի տոհմից էր: Մեր կորուստը միայն մեր արձակած փամփուշտներն էին և միայն դժգոհում էինք, որ զինուորները շուտ հասան ու չը թողեցին, որ զէնքերը հաւաքենք: Հասել էինք Ասկերանի մեր նախկին դիրքին, ձիանքը պահ տուել վերևի հարթոցում, մենք էլ դիրքից քիչ վերև նստոտել, զինուորներին էինք նայում. յանկարծ մի հրացան պայթեց, որից 1/2 րոպէ անց, հետեւեցին զինուորների հրացանները. դո՛ւ մի ասիր, ճանապարհի փոքրիկ ձորակում վեց թուրք թաց կացած են լինում: զինուորները հէնց որ երևում են, սրանց հայերի տեղ ընդունելով, թուրքերը կրակում են ու մի զինուոր վիրաւորում: Հետեւանքն այն է լինում, որ այդ վեց թուրքերին էլ զինուորներն են կոտորում պակասը լրացնում: Մի քիչ էլ անցաւ, տեսնենք զինուորները շղթաներ կազմելով պաւկեցին ճանապարհի կողքին ու սկսեցին կանոնաւոր զալպեր տալ դէպի մեզ. սկզբում կասկածում էինք, թէ այդ մեզ վրայ կը լինի. բայց երբ գնդակներն սկսեցին մեր կողքի քարերին էլկ-էլկալ, կասկածնիս փարատուեց. մեզ ուրինք մնտակայ ձորը, այնտեղով քաշուեցինք վեր, ապա ձիանք հեծնելով բարձրացանք սարալանջը, որտեղ այլ ևս զինուորի գնդակ հասնել չէր կարող: Բայց Ասկերանն էլի մեր ձեռքն էր, և եթէ վերևից էլի ձիաւորներ իջնէին, այս կողմից կարող էինք սեղմել:

Այդ օրը մի նշանաւոր օր էր. մինչև այժմ մենք միայն մի ձիու կորուստ էինք ունեցել, իսկ թուրքերի կորուստն, ամսի 17-ից մինչև 22-ը՝ դգուշանում եմ հաշուելու, չափազանցութեան մէջ չընկնելու համար: Ասկերանի յաղթութիւնների լուրերը տարածուել էին Վարանդայի գիւղերում. ժողովուրդը ոգևորուել էր. շատերը դժգոհութիւն էին յայտնում, որ իրենց անգործ ենք թողել գիւղերում, կուի չենք տանում: Իսկ մենք տեսնում էինք այդ բոլորը և խորապէս զգում, որ հայը որքան խաղաղ, նոյնքան էլ կուռող է. որքան համբերող, նոյնքան էլ կատաղել գիտէ: Ո՞վ էր մեղաւորը, որ հայն արիւն էր թափում: կամ որքա՞ն ցանկալի երևոյթ էր, որ հայն էլ գիտէր մարդիկ մորթել վայրենութիւններ անել... լաւ է, թէ վատ է, այդպէս էր և մենք համոզուած էինք, որ սկզբում մտրակով կուի դուրս բերած գիւղացին այժմ ինքնաբերաբար կարող էր հրացան ուսը գցել ու թշնամու հետ գնդակ փոխանակել, իր իրաւունքները պաշտպանելու համար:

Օգոստոսի 23.

Թէև զինուորները եկել և Ասկերանում կանգ էին առել, այնուամենայնիւ, մենք այդ օրն այնտեղ պահակներ դրինք ու ինքներս անցանք գաւառը, մի փոքրիկ պտոյտ կատարեցինք, զինուորական ինչ որ կարգադրութիւններ կար, արինք ու վերադարձանք Նախիջևանիկ և Փիրջամալ գիւղերը, որտեղ գիւղի պահապաններն ասել էին մեզ, թէ՝ ներքևում, Աղդամի այգիների ծայրում, ինչ որ ձիաւորներ են երևացել: Այդ օրն անցկացաւ խաղաղութեամբ, ոչ մի միջադէպ չպատահեց. գիշերն այդ գիւղերում մնալով, առաւօտեան նորից իջանք Ասկերան:

Օգոստոսի 24.

Այս օր ևս աչքի ընկնող առանձին ոչինչ չպատահեց: Հաղորդակցութեան ճանապարհը կատարելապէս կարուած, ո՛չ մի ճանապարհորդ, ո՛չ մի կառք կամ սայլ չէր անցնում. թուրքերը մնացել էին ներքևում փակուած, հայերն էլ վերևից ցած իջնել չէին կարողանում: Այնուամենայնիւ առաւօտեան ժամը 10-ին Աղդամի կողմից երկու կառքեր երևացին, շրջապատուած կօզակներով. անշուշտ „մեծանձն ոմն“ էր. նրանք եկան ու կանգ առան Ասկերանի ստրաժնիկների հանրատան առաջ: Մի կէս ժամ չանցած, երևաց մի հայ՝ երկու կօզակներով ու մեզ յայտնեց, որ դա գեն. նահանգապետ Տակայշվիլին է, գնում է Շուշի խաղաղութիւնը վերահաստատելու համար, և առաջարկում է մեզ մնտակայ գիւղերից հաւաքել գիւղացիներին Ասկերան, հաշտութեան մասին խօսելու: Ժամանակ չուշնենալով գիւղացիներին հրաւիրելու և այդ մի աննպատակ, անգործնական բան համարելով, որոշեցինք չորս հոգով իջնել գեներալի մօտ: Պատուիրակներին յետ ուղարկելով, մի կէս ժամից յետոյ էլ մենք ճանապարհուեցինք, միայն նախօրօք մեզ հետ վերցրինք մի քանի զինուորներ, թմենների տակ թողեցինք, որպէսզի, երբ դաւաճանութիւն լինի, ուղղակի յարձակումն գործենք: Դուրս եկանք խճուղին, ձիանքը մտրակեցինք և արշաւասոյր հասնելով գեներալին, մի 50 քայլ մնացած, աշխատեցինք ճարպիկութեամբ ցած թռչել և վստահ քայլերով մօտ գնացինք: Նահանգապետն ու նրա շրջապատող օֆիցէրները մի առանձին հնազանդութեամբ խմբուած, մեզ էին նայում. կօզակներն ու զինուորները մնտով մեր ուղղական ու անդրավարտիկում ամրացրած շորերն էին ցոյց տալիս, և ինչ որ փսփսում: „Պարոններ, ասաց նահանգապետը, որոշ ժամանակ մեզ դիտելուց յետոյ,— մեծ դժբախտութիւն է պատահել. Ղարաբաղում ևս հոսեց երկու հարևան ազգերի արիւնը. շատ մարդկանց տուն քանդուեց, շատ մարդիկ դժբախտացան երկու կողմից էլ. սակայն բաւական է. ես եկել եմ և ոչ մի միջոց չպիտի խնայեմ խաղաղութիւն հաստատելու համար: Մտէք գիւղերը, հասկացրէք գիւղացիներին, որ համարձակօրէն գուրս գան, իրենց գիւղական գործերը կատարեն: Թէ չէ՝ սա ինչի՞ նման է, ինքներդ ասացէք,— և նա ցոյց տուաւ չորս կողմը փռուած թուրքերի դիակները, որոնք դեռ չէին հա-

ւաքւած,—սա ինչի նման է, կրկնեց գեներալը, և սա արւել է հայերի ձեռքով, հաշտութիւնից յետոյ"։

—Ձե՛րդ գերազանցութիւն, ասացի նրան, ամբողջ հոգով ուրախ ենք և շնորհաւորում ենք ձեր գալուստը, որովհետև համոզւած ենք, որ դուք անշուշտ խաղաղութիւնը կը վերականգնէք. իսկ մենք ի՞նչ ենք ցանկանում ի սրտէ, եթէ ոչ՝ խաղաղութիւն և միայն խաղաղութիւն։ Մեզ երբէք ցանկալի չէ եղել և ցանկալի էլ չէ այժմ՝ Թուրքի արիւն թափելը։ Սակայն հանգամանքները մեզ այնպիսի պայմանների մէջ են դրել, որ վաղը մեր հայերը կարող են նոյն իսկ այնպիսի գազանութիւններ անել, որ ինքներս կը զզւենք։ Իսկ ինչ վերաբերում է նրան, թէ հաշտութիւնից յետոյ մենք Ասկերանում կոտորել ենք Թուրքերին, այդ տեղ ձերդ գերազանցութեանը թիւրիմացութեան մէջ են գցել, որովհետև վերադարձող Թուրքերը միանալով ներքևից բարձրացող Թուրք ձիաւորներին, նախայարձակ եղան Խարամորթ գիւղի վրայ. և հայերը՝ մեղաւոր չեն, որ Թուրքերն են եղել յաղթողները։

—Այդ բոլորովին ճիշտ չէ,— ասաց գեներալին ուղեկցող Աղդամի Թուրք պրիստաւ Իբրահիմ-բէկը։ Այստեղ հայերն են յարձակւել ու Թուրքերին կոտորել։

—Ես շատ լաւ գիտեմ, ովքեր են մեղաւոր,— վրայ բերաւ գեներալն, առանց պատասխանելու Իբրահիմ-բէկին.—հայերն իբրև աւելի քաղաքակիրթ ժողովուրդ, գործ չպէտք է ունենան արեան հետ. ես հաստատում եմ, որ յարձակողի առաջ պէտք է պաշտպանւել։ դուք էլ պաշտպանւել էք. բայց կրկնում եմ. ես եկել եմ. այժմ էլ յարձակող չի լինի, ուրեմն՝ աւելորդ է և՛ պաշտպանւելը։

—Ձերդ գերազանցութիւն,— ասաց Խ-օն, մեզ այդ դիակներն էք ցոյց տալիս, և մենք ամաչում ենք, բայց որտեղի՞ց էին դրանք. չէ՞ որ դրանց մէջ նոյն իսկ Արաքսի այն կողմից մարդիկ են եղել. ստուգեցէք, և կը հաստատւի այդ. ի՞նչ ունէին այստեղ, չէ՞ որ դրանք առևտրի չէին եկել, այլ՝ արիւն, հայի արիւն թափելու, հայի կին բռնաբարելու, հայի տուն աւերելու. և ինչպէս ինքներդ հաստատեցիք, մենք միայն պաշտպանւել ենք։ Թուրք բէկերն ազդեցիկ մարդիկ են. գրել են իրենց հպատակներին.—այս ինչ թւին հաւաքւեցէք Շուշին աւերելու, հայի հարստութիւնը թալանելու և ամեն կողմից աւազակաբարոյ մարդիկ թռել են դէպի մեզ. եթէ մենք նպատակ ունեցած լինէինք Թուրքերի հետ կռիւ մղելու, մենք էլ նախօրօք իւրաքանչիւր գիւղից մի քանի հոգի Շուշի կը հաւաքէինք և գուցէ այն ժամանակ ձեր ակնարկած դժբախտութիւնն աւելի սոսկալի լինէր. բայց այդ մենք չենք արել և մենակ հենց այդ փաստն ապացոյց է, որ մենք չենք դժբախտութիւն առաջ բերողը։ Միայն, ներեցէք համարձակութեանս, դուք կը շեղուէք և յանցաւորներին գտնել անկարող կը լինիք, եթէ ձեր աջակիցները պրիստաւները, լինին կամ, առհասարակ, ոստիկանութիւնը։

—Ոչպատասխանեց գեներալը,—իմ աջակիցներս ժողովրդի բարեմիտ ներկայացուցիչները պէտք է լինին, և ամեն ոք պիտի կարողանայ իր կարիքների մասին ինձ յայտնել։

—Կօմիտէտ էրքեանն էլը Ալլահ երլասսը. համբը օնըն իշլարը դը.—ասաց պրիստաւ Իբրահիմ-բէկը, նոր մտեցող մի գիւղացու։

Այդ որ լսեցինք, բոլորս էլ վրայ պրծանք պրիստաւին.

—Ձերդ գերազանցութիւն,—դարձեալ գեներալին—ահա՛ պրիստաւը նորից հայերին է մեղադրում, որ կօմիտէներն են տուն քանդողները.—մի՞թէ հայերը պէտք է թոյլ տային, որ Թուրքերն իրանց կոտորէին, որպէս զի մեղքը հայերի վրայ չընկնէր։ Մեր կանայք ահա՛ քանի օր է, անտառներումն են ապրում, տան իրեղէնները հողի տակ են թաղել, որպէս զի աւարի չը մնանի, բայց մոէք Թուրք գիւղերն, այնտե՞ղ էլ այդպէս է. հաւատացած ենք, թէ ո՛չ. և էլի յանցաւորը հայերն են. երևի շատ լաւ կը լինէր, եթէ հայերի հարստութիւնը Թուրքերը տանէին. այն ժամանակ էլ մեղք չէինք ունենայ...

Այնուհետև գեներալն էլի բաւական խօսեց, յետոյ իր կինն առաջ անցաւ, համոզեցուցիչ կերպով յայտնելով, որ իր ամուսինը խաղաղութիւնը կը վերահաստատէ, մենք էլ „գնանք, մեր կանանց ու երեխաներին սիրտ տանք, որ այսուհետև ոչինչ չի լինի"... Մենք վերադարձանք, գեներալն էլ ճանապարհ ընկաւ Շուշի։

Օգոստոս 25-ից մինչև սեպտեմբեր 3-ը ոչինչ չը պատահեց. մէկ-մէկ թեթև ընդհարումներ տեղի էին ունենում, Թուրքերից տաւարներ էին խլում հայերը, կամ գիշերն էին իջնում, գողանում, սարերից ցած եկող քոչերներից ոչխարներ խլում, օրական մի տասը գընդակ փոխանակում, բայց այդ բոլորը կարծես թէ փոթորկի վերջին արձագանքներն էին, և թւում էր, որ խաղաղութեան հոտ էր գալիս։ Որովհետև գեներալ Տակայշվիլին մեծ-մեծ խոստումներ էր արել, թէ՝ մեր հւրաքանչիւր կարիքին առանձին ուշադրութիւն պիտի դարձնի, մի քանի խնդրագրեր պատրաստեցինք, յայտնելով, որ մեր հողերն անմշակ են մնում, մեր այգիները խառն լինելով Աղդամի շրջանի Թուրք կալածների հետ, իջնել և խաղող հաւաքել չենք կարողանում, որ այնտեղ Թուրքերը կոտրտում են տանջանքով բուսցրած մեր ծառերը և այլն, և այլն։ Բայց ո՛չ մէկ խընդրագիր ո՛չ մի հետևանք չը բերեց, գեներալի մեծ-մեծ խոստումներն էլ մնացին, և նրա ապահովագրած խաղաղութեան փոխարէն՝ ամեն կողմերից նամակներ էինք ստանում, թէ այս կամ այն կէտերում՝ Թուրք ձիաւորներ են հաւաքւում։ Տեսնելով, որ դրութիւնը նորից ծանրանում է, մի քանի ձիաւորով դուրս եկայ գաւառ, մտայ մի քանի վտանգաւոր տեղեր, բայց ամեն տեղ ժողովրդի ռազմական ոգին բարձրացած և վտանգի ժամանակ կռիւ դուրս գալու պատրաստականութիւնը տեսնելով՝ վերադարձայ Խ-ի մօտ, ուրտեղ և պէտք է ծրագրէինք մտիկ ապագայում անելիքնիս։

Ա—յիս

II

ՄԻՐԱՇԱՂԼՈՒԻ ԵՒ ԳԻԼԱՓԼՈՒԻ ԴԷՊՔԵՐԸ

Սեպտեմբեր 2-ին ես վերադարձայ, իսկ Խ-օն դուրս եկաւ գաւառ, մեր պտոյտների տպաւորութիւնը թարմ պահելու համար։ Հետևեալ օրայ գիշերը ժամը մօտ 10½-ին մտակայ բլրի ծայրից մի հարայ եկաւ.— „ով քրիստոնեայ է, հասնի, Միրաշալլուն Թուրքերն աւերեցին". այդ հարայը կրկնւեց մի երկու անգամ, յետոյ Փ. գիւղի պահապանները եկան ու յայտնեցին, որ Քեաբալեցի Թուրքերը միանալով Աւդալ-Գիլափլու գիւղերի հետ, յարձակւել են Միրաշալլու հայ գիւղի

վրայ երկու կողմից և կոտորում են մարդկանց։ Երեք գիւղերից վերցնելով 50 հոգի, տեղական զինուորական խմբապետների հետ թռանք դէպի վանգւած գիւղը, որ 3 վերստի վրայ էր գտնւում. ժամը 11½-ին հասանք։ Գիւղացիք դեռ շարունակում էին կռւիլ։ Մի քանի տեղ դիրքեր բռնելով, վերևի ճանապարհով մի տասը ձիաւոր ուղարկեցի, որոնք սխալմամբ ուղղակի մըտնում են թուրքի ձիաւորների մէջ, մի զալպ են տալիս, մի քանիսին գլորում և քշում գիւղի մէջ. թուրքերը հասած օգնութիւնը տեսնելով, մտնում են թթենիների տակն ու խմբւում այնտեղ. բայց մեր դիրքերից կրակ ենք բաց անում այդիների վրայ, որ 100—200 քայլի վրայ էին մեզնից. մի քանի հայհոյանքներ ու վայեր լսեցինք. նշան էր, որ նրանցից զոհւողներ եղան։ Մինչև լուսաբաց շարունակւեց կռիւն, իսկ լուսաբացին բոլոր թուրքերը հեռացան. քեաբուլուեցի ձիաւորներն հասնելով, իսկոյն վերցրին իրենց քօչը, որ Գիլափլուի դաշտերումն էին մի շաբաթից ի վեր իջել, ու արագ կերպով քշեցին դէպի Մարդլլու։

Մտանք գիւղ. 3 թուրք դիակներ ընկած էին մէկը գիւղամիջում, միւս երկուսը՝ գիւղից քիչ ներքև. այստեղ այնտեղ էլ լճացած արիւն էր երևում, բայց դիակները տարել էին թուրքերը. յետոյ հաստատւեց, որ թուրքերի կորուստն այդ գիշեր 50-ից պակաս չէր եղել։ Սակայն Մերաշալլուն ևս գգալի վնաս էր կրել. վեց տուն ամբողջապէս թալանել էին, սպանւած էր մի պառաւ կին, մի ջահել հարս, երկու երեխայ և 2 մարդ, ընդամենը՝ 6 հոգի. վիրաւորւած էր և մի ծերունի։ Երկու երեխաների և հարսի դիակները տարել էին եկեղեցի. մի քանի զինուորներով մտանք այնտեղ. ոչ ոքի աչքերից արտասուք չը հոսեց այդ սրախողխող մատաղ դիակները տեսնելուց. սակայն արտասուքի փոխարէն նրանց դէմքերին վրէժխնդրութեան զայրոյթն էր ցոլում և ամեն կողմից պահանջ էին դնում՝ աւերել Աւդալն ու Գիլափլուն։ Երկու սուրհանդակ ուղարկեցի Խ-յին, որպէսզի եր խումբն ստւարացնելով հասնէ Մերաշալլու, մի սուրհանդակ էլ Ասկերան հասցրի, կօզակների գլխաւորին տեղեկացնելու դէպքի մասին։

Ամսի 5-ին եկան 8 կօզակներ, տեսան դիակները և մի նպաստաւոր տեղեկագրով վերադարձան Ասկերան, տեղեկագիրը հրամանատարին յանձնելու և եղելութիւնը պատմելու, երբև ականատեսներ։ Հասաւ և Խ-ն քսան ձիաւորով։ Նախօրօք բոլոր դիրքերում մարդեկ թողնելով, ամսի 6-ին սկսեցինք յարձակումն Աւդալ և Գիլափլու 700 տուն ունեցող, անառիկ գիւղերի վրայ։ Երկակայ թուրք գիւղերից եկել հաւաքւել էին բազմաքանակ ձիաւորներ, այնպէս որ տեղական ուժերի հետ միասին՝ երևի 200 հոգուց պակաս չէին լինի, իսկ մենք արդէն 250-ի չափ կտրիճներ ունէինք ու դեռ օգնութիւն պիտի գայիր և՛ Բերդաձորի կողմերից։ Ժամը 6-ին առաւօտեան՝ սկսւեց կռիւը. բայց դա կռիւ չէր, այլ մի կանոնաւոր պատերազմ. հրացանների որոտից ականջ էր խլանում, հարիւրաւոր, հազարաւոր գնդակներ ճանճերի պէս տզզում, անցնում էին մեր ամեն կողմերով. թուրքերը մերձակայ բլուրները գրաւել, աշխատում էին մեզ շրջապատել սակայն մենք շղթան լայնացնելով՝ այդ թոյլ չը տւինք, իսկ Խ-ն էլ մի խումբ կտրիճներով մի ուժգին գրոհ տալով՝ դիմացի բլրից քշեց թուրքերին. հէնց այդ ժամանակ ներքևից էլ մեր զինուորական խմբապետ Մ.-ն յարձակւելով, հալածեց թշնամուն. յանկարծ գործի տաք ժամանակ, Մերուշէնի սարի դօշից մեր միւս զինուորական խմբապետը հասաւ իր խմբով, և անտառից որոտացող հրացանները պարզ ցոյց տւին, որ մերոնք կամաց-կամաց իջնում են դէպի Աւդալ։ Ամեն կողմերից տղէրքը ոգևորւած մի անմման յարձակում գործելով, բոլոր թուրքերին դուրս մղեցին դիրքերից. ներքևից դիակներն այս ու այն թփի, այս ու այն քարի կողքին գլորւում էին, իսկ մերոնց՝ ո՛չ մի վնաս։ Ժամը 11-ին մօտ մենք խուժեցինք Աւդալ գիւղը. և հէնց որ այս ու այն կողմից կրակը դրինք, մէկ էլ տեսանք, Գիլափլուի տակից մեր մի ուրիշ խումբ հասաւ ու վառեց մի քանի տուն. միաժամանակ Աւդալի ձորից կրակեցին Գիլափլուի հարաւ-արևմտեան կողմը. Ղզղալի-Բուսուսնից էլ մեր միւս կտրիճները կրակ արին արևելեան անկիւնից և քիչ յետոյ, Աւդալ Գիլափլուն վերածւեց մի սոսկալի, դժոխային տեսարանի. փախչողը փախչում էր, իսկ ով չէր կարողացել օր առաջ տնից դուրս գալ, խանձւում էր իր սեփական տան մէջ. կոտորւում էին կանայք ու երեխաներ ևս։ Մի տան միջից դուրս եկաւ մի կին, երեխան գրկին ու աղերսագին մրմնջաց.—Մի՞թէ իմ կեանքս չէք խնայի այս երեխայի համար.—Նրա դէմքին սարսափն ու վիշտն այնպիսի ուժեղ շեշտով էր որոշւած, որ շատ դժւար կը լինէր դիմանալ... մեր խմբապետներից մէկը գնդակը դրեց հրացանում ու գոռաց.—ո՛վ որ սրան կպչէ, գնդակահար կ'անեմ։—Այդ ժամանակ մօտեցաւ մերաշալլուեցի մէկը, որի երեխան ու կինը մորթել էին մի օր առաջ և ասաց.

—Դու տեսե՞լ ես իմ կնոջ և երեխայի դիակը։

—Տեսել եմ.—պատասխանեց խմբապետը։

—Ուրեմն՝ սրանք նմն են։—Ասաց նա, յարձակւեց...

Այո, կատարւեցին այնտեղ գազանութիւններ, այնպիսի գազանութիւններ, որի համար, ինչպէս գեներալ Տակայշվիլին էինք ասել, հայը միայն կարմրիլ կարող էր։ Բայց գազանային բնազդը գիւղացիների մէջ շատ էր բորբոքւել. զսպել չէինք կարող. լոկ մզկիթը միայն մի կերպ ազատեցինք վառելուց։ Հարուստ, անչափ հարուստ էր Գիլափլուն. նրանց տների սարք ու կարգը քաղաքներում միայն կարելի էր գտնել. բայց հարկաւոր է խոստովանել, որ այդ հարստութիւնը սըրանց քրտնաջան աշխատանքի արդիւնք չէր. աւազակներ էին նրանք և երկար տարիների ընթացքում հայերից թալանելով, իրանց տներն էին բարեկարգել. բայց հայը մի իմաստուն առած ունի. „քամու բերածը՝ քամին կը տանի“։ Ինչպէս թալանել, բերել էին, այնպէս էլ թալանով տարւեց։ Գիլափլուեցիք այնքան վստահ էին եղել իրանց ուժի և գիւղի անմատչելիութեան վրայ, որ հանգիստ սրտով սպասել էին, թէ՝ հա հայերը ջարդւած՝ յետ կը փախչեն, կամ եթէ չը փախչեն էլ, գիւղը մտնել չեն կարող։ Մոռացայ ասել, երբ մտանք մզկիթը, այնտեղ գտանք 20-ի չափ անկողիններ, փռած, պատրաստ. այդ երևի, եկւոր ձիաւորների մի խմբի համար էր։

Բացի Աւդալ ու Գիլափլուից (700 տուն). աւերւած են Վարանդայի շրջանում հետևեալ 4 թուրք գիւղերը.

1) Դիւանլար, 120 տուն, սպանւած 8 հոգի. 2)

Հազրաֆլու, 35 տուն, սպանուած 3 հոգի. 3) Ղարա-դաղլու 150 տուն։ Վերջին գիւղում սպանուած են 18, դերի են վերցուած 72 հոգի, որոնցից սպանել են 27 հոգի, իսկ մնացածներին լաւ պահել են և յետոյ ազատ արձակել։ Հայերի կողմից ոչ մի կորուստ։

Այդպէս կործանուեց Ավդալն ու Գիլափլու, այն աւազակային որջերը, որ ամբողջ տարիների ընթացքում շրջակայ հայերի համար պատուհաս էին դարձել։ Աւերակների կոյտերը, դուներում ընկած դիակները, փախչողների վայնասունը խելագարեցնել միայն կարող էին։ Իմ աչքով մի կին տեսայ, որ երեք երեխայ գրկած ուշակած, սայթաքելով, գլորուելով, „Ալլա՜հ, սա՛ն սսկլա“ գոռալով, փախչում էր քարվանի յետևից. մի զգակով կարելի էր 2-ին 3-ին գլորել. բայց ի՞նչ տեսակ քարէ սիրտ պէտք է ունենալ այդ տեսակ մի դրագործութիւն կատարելու համար...

Գիլափլուի ներքևի մնացած թաղը վնասելու վրայ ենք, երբ մի ձիաւոր սրարշաւ հասաւ ու գոռաց— ձր տները չը քանդի, ի՞նչ բանի էք, Վարազաբոյնը թուրքերը քանդեցին։—Գլխներիս ջուր մաղեց. Խէչօն հռու էր, մարդ ուղարկեցի նրա յետևից, ես էլ 15 հգի շուրջս գտնուած տղոցը վերցնելով, վազեցի դէպի Վարազաբոյն. այնքան շտապեցինք, որ ձի նստելու անգամ ժամանակ չունեցանք։ Հասանք Վարազաբոյն. Գիլափլուի յաղթահարած ձիաւորներն իրենց վրէժը լուծելու համար, յարձակուել էին այդ գիւղի վրայ։ Բոյց գիւղում գտնուած գիւղացիներն առաջնին փակել էր, չը նայելով որ իրանք ընդամենը 20 հոգի էին եղել։ Բանը սա է, որ յարձակուող թուրքերին միացել էր նաև Աղդամից եկած կօզակները, որոնց առաջնորդում էր պրիստաւ Իբրահիմ-բէկը։ Ծիծաղելի բան. ոչ կողմից մեզ եկել, միացել էին կօզակները, թուրքի հետ կռուելու, միւս կողմից էլ կօզակները եկել, միացել էին թուրքերին, հայերի դէմ կռուելու. արի ուհասկացիր, թէ՝ կառավարութիւնն ի՞նչ է ուզում անել։

Ի քիչ ժամանակից յետոյ հասաւ Խէչօն իր տղերքո և կէս ժամ միայն կռուից յետոյ, թուրքերը յետ փախան։

Այդ օրը թուրքերի ունեցած կորուստը ահագին էր։

ԾՈՒԾՈՒ ԳԱՒԱՌՈՒՄ

Շուշի, նոյեմբեր 20-

Խէչն դաւառակի թրքական սպատակութիւնները՝ արդն արձանագրուած են։ Թուով անհամեմատ աւելի բազմաթիւ և լաւ զինուած՝ թուրքերը շարունակ նեղում էին կղզեցած, կենտրոններից կտրուած հայ անզէն գիւղօրայքը։ Բոլ դանդատներն ու բողոքները իշխանութեան առաջ՝ ապդիւն անցան։ Թուրքերը աւերեցին ու կողոպտեցին Կիչ և Ուլբաբ փոքրիկ գիւղերը, սպանելով մեկ գիւղացուհին էլ վիրաւորելով... Մնում էր, որ հայերը երենք տեսին իրենց գլխի ճարը։ Եւ ահա ամսոյս 16-ին կազմակերպեց մեծ խումբ, բաղկացած 250 հոգուց, բոլորն էլ ձիով։ Ծրագրուած էր ընդարձակ շրջապով պատել թրքականները ղշլաղները։ Խումբը տեղ է հասնում դեռ լոյսը չը ցաւած։ Սկսում են դիրքեր բռնել և հեռադեռ լայնադաշ շրջան։ Մի դիպուած դալիս է խանդարելու և արշանին չէ աջողւում շրջապատել թուրքերին բոլոր կողմերը։ Որտեղից որտեղ՝ մի թուրք է այնուում և զինուորնից մեկը անզգուշութեամբ դնդակահար է անում նրան։ Հրացանի ձայնից թուրքերը վեր են թռչում և ըսկսում են յեղապատառ փախչել։ Նախ նրանք դիմում են դէպի Աղդամի ճանապարհը (մինչև Աղդամ մօտ 10 վերստ էր), բայց այդտեղ մերոնք դիրք բռնած լինելով՝ կոտորելով դրուում են փախչողներին։ Այնուհետև փախը սկսում է մի այլ ուղղութեամբ.—այդտեղ էլ հանդիպում են մեր զինուորների կրակին։ Վերջապէս թուրքերը ընկնում են Ղազանչի տանող ճանապարհի վրայ, որ դեռ բռնած չէր մերոնցից։ Տեղի է ունենում կռիւ թուրքերի և Ղազանչի գիւղի հայերի միջև, վերջիններս լուրջ դիմադրութիւն են ցոյց տալիս սկզբում, ընդամենը 10 հրացանով, բայց շուտով ընկճուում են. գիւղը թալանուում է, աւերուում։ Թուրքերի կողմից սպանուած են մօտ 50 հոգի, մեջները, դժբախտաբար, կան և կանայք ու երեխաներ... Հայ գիւղացիք ընդարձակ չափերով թալանել են թրքական գիւղերը, տարել են և տաւար ու ոչխար և տան ամանեղէններ և ցորեն, դարման, ու ապա տները կրակի են մատնել։ Ամառարակ, յաւօք սրտի պէտք է նկատել, որ հայ գիւղացու հոգեբանութիւնը ևս զգալի կերպով փոփոխուում է վերջին դէպքերի ազդեցութեան տակ... Վերջին կռիւներում հայերը մեկ զոհ միայն տուին։

Սպասուում են խիստ միջոցներ կառավարութեան կողմից, երևի էկզեկուցիա կը նշանակի Խաչէնում. գուցէ և մարդիկ աքսորեն։

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԾՐՋԱՆՈՒՄ

Հոկտեմբեր 21.

Գօրիսի և Մինքենդի մէջտեղը գտնուած Խոզնաւար գիւղը մեր խմբի օգնութեամբ ջարդել է թուրքերին, կոտորելով 150 հոգուց աւելի։

Խնձորեսկի ընդհարման ժամանակ թուրքերը ըսպանել են 12 հայ հնձուորներ, իսկ իրանցից ընկել են մեկ սպանուած ու երեք վիրաւոր։ Օգնութեան հասնող խումբը ուշ է տեղ հասել, որովհետև կռիւը շատ կարճաւ է եղել։

Ի՜ չ-թ ա փ ա լ ա ր ի ընդհարման միջոցին, երբ թուրքերը վնասել էին Եայլի գիւղի արտերը, մեր ուղարկած խումբը, Եայլի գիւղացիների հետ միասին յետ են մղել թշնամուն, սպանելով 20 հոգին, խլելով 75 ոչխար։ Մեր կողմից՝ մեկ վիրաւոր։

Տ ե ղ գիւղում մեր ուղարկած խումբը գիւղացիների օգնութեամբ յետ է խլել տարուած աւարը, սպանելով 10 թուրք։ Հայերը կորուստ չեն ունեցել։

Զանգեզուրից վերջին պահուն ստացած նամակից քաղում եմ՝ հետևեալը. „Լուր ստացանք, թէ Խոզնաւարը կրկին անգամ պաշարուել է։ Իսկոյն Մխիթ-ի խումբը, որ այդ ժամանակ Խնձորեսկումն էլ“, տեղ է հասնում և մի օրուայ կատաղի կռուից յետոյ երբ նրան օգնութեան են գնում ետևից դրկուած երկու խումբ ևս, մեծ ջարդով քշում են թուրք խուժանին և ապա մերոնք դալիս պաշարում են Քեօսալար գիւղը, նախապէս տեղեկանալով Խոզնաւարի թրքական մասը (30 տուն)։ Ապա պարբերաբար ուղարկում է և մեր ռազմիկ ուժերի մնացածը և սկսում է Քեօսալարի աւերումն ու թալանը (50 տուն)։ Բնակիչներից շատերը կոտորուում են։

Նոյն ուղղութեամբ տղերքը անցնում են առաջ, աւերելով թրքական մի շարք ուրիշ գիւղեր՝ Նալաք, (50 տ.) Բայանդուր (100 տ.), Բինաերի (40 տ.), Մալիբայլու (150 տ.) բաղկացած չորս ղշլաղներից և Ջաղաջուր (70 տ.)։ բաղկացած երկու ղշլաղներից։

Տպայոց այս սոսկալի, խիստ աջող արշաւանքից յետոյ՝ փախստական թուրքերը համախմբուելով գալիս ու պաշարում են Խոզնաւարը, սակայն տղերքը իսկոյն վրայ հասնելով, ահագին ջարդ են տալիս ու յրուում։

Այս սարսափելի աւերածներից յետոյ՝ Մինքենդի թուրքերը տեսնելով որ հերթը իրենցն է, թողնում են գիւղը, փախչում։ Գաւառապետը այդ միջոցին Ղարաղշլաղ է լինում։ Վերադառնալուց՝ նա բռնի ստիպում է խոզնաւարցիներին՝ թողնել իրենց գիւղը...

Թէ ի՞նչ կը լինի վաղը դժուար է գուշակել։

ԴԷՊՔԵՐԸ ԴԻԶԱԿԻ ՇՐՋԱՆՈՒՄ

—

Օգոստոսի 23-ին, ուղիղ 3 օր յետոյ Շուշայ կռւից, սկսւում է յարձակում Թուրքերի կողմից Քուրաթաղ (Դուդուկչի) Հայ-Թրքական գիւղի վրայ։ 21-22-ին ամբողջ օրը Թուրքերը ձիաւորների ահագին խմբերով հաւաքւում էին այդ գիւղի խոշոր կալւածատէր, Շուշայ բնակիչ Հաշիմ-բէկ և Ջամալ-բէկ Ալեքերովների տունը, խորհրդակցում ժամերով և, խմբերի բաժանւելով, ցրւում զանազան կողմեր։

Այդ հանգամանքը ստիպել էր մեզ ուղարկել այնտեղ մեր ընկեր Խէչ-ին և Միս-կին իրենց խմբով մօտ 10—12 հոգի որոնք բացի դրանից հարևան հայ գիւղերից հաւաքում են հրացանաւորներ և երեք մասի բաժանւելով, հետևեալ գիւղերի մէջ՝ Քուրաթաղ, Էդիլլու, Ախիցիք, Աղբուլաղ, Խրմանջուղ, Ալիթանց, Մելիք-Ջանլու և Քոչբէկ — սկսում են հրահրել Թուրքերի գործողութիւնների վրայ։

Թուրքերի յարձակմանը ուժեղ կերպով դիմադրելու համար, բոլոր խմբերը կենտրոնանում են Քուրաթաղ և առաջին օրը յետ մղում Թուրքերին։ Երկրորդ օրը վաղ առաւօտեան Թուրքերը նորից յարձակում են գործում, բայց այս անգամ երկու կէտերի վրայ միաժամանակ թէ Քուրաթաղի և թէ Ախիցիքի վրայ։ Խմբի մի մասը մնում է Քուրաթաղը պաշտպանելու, միւսը գալիսէ օգնութեան Ախիցուց։ Շուտով կռւի տեղն է հասնում գաւառապետի օգնական Կուստատիլադզէն կօզակներով և հրամայում զալով տալ Քուրաթաղը պաշտպանող հայերի վրայ։ Հայերը և որ գլխաւորն է մեր զինւորները ստիպւած են լինում յետ նահանջել և այդ ժամանակ Թուրքերը մտնում են գիւղը ու թեթև վնաս են միայն կարողանում հասցնել. Թալանում են մի քանի տներ և 7 հատ էլ ձի են տանում, մեր զինւորների ձիերը։

Կօզակների ներկայութիւնից սարսափած՝ գիւղացի հրացանաւորները թողնում են կռւի դաշտը և իրենց երեխաներին տեղափոխում Հադրութ, որը աւելի ապահով տեղ է դտնւում։ Մնում են մենակ մեր զինւորները, որոնք փոխադրւելով Աղբուլաղ, շարունակում են կռւել։ Թուրքերը, չը կարողանալով խուժել այդ գիւղերը, անցնում են դէպի Խրմանջուղ և որովհետև Խրմանջուղցիք, պահապաններից սկսած մինչև վերջին երեխան, մի օր առաջ թողած ու փախած են լինում, գիւղը ոչ մի դիմադրութիւն չէ ցոյց տալիս։

Հադրութից անմիջապէս օգնութեան հասնող խումբը ճանապարհին դտնում է Խրմանջուղը շրջապատւած և կռւի բռնւած Թուրքերի հետ։ Խումբը Ար-ի և Ի-ի առաջարկութեամբ, շղթայելով մի մեծ լեռան գլուխ, որ դտնվում է Խրմանջուղի աջ կողմում, ուռռա՛ գոչելով վեր է բարձրանում լեռն ի վեր և ճակատ առ ճակատ հանդիպելով Թուրքերին, սկսում են կարկտաթափ անել նրանց։ Շաւրած հայերի անակնկալ յարձակումից, Թուրքերը սկսում են փախչել դէպի ձորի մէջ դտնւող Թալանի եկած Թուրք խուժանը, որը մի քանի բոպէից արդէն սպառնում էր գիւղը թափւել, բայց ճանապարհին կոտորւում են։ Ար. իջնելով ներքև, կտրում է Թուրքերի յետ փախչելու ճանապարհը, Աս. և ուրիշները անցնում են ձորը և միւս լեռան ստորոտը և սկսում ներքևից վերև գալ ու կոտորել պաշարւած Թուրքերին, որոնք վերևից հալածւելով Ի-ի ուղարկած 3—4 զինւորներից, ձորի միջով աշխատում են փախչել։ Երկու կրակի մէջ բռնելով, մերոնք կոտորում են այդտեղ դտնւող բոլոր Թուրքերին և բերում կենդանի մնացած 4 ձիաները, ահագին քանակութեամբ որեր — մեծամասնութիւնը ժանդոտած, և մի բերդանի հրացան։ Թուրքերը դրսից զրկւած լինելով Խրմանջուղում կռւող Թուրքերին օգնութեան գալու հնարաւորութիւնից, շարժւում են դէպի Մելիքջանլու հայ գիւղը։ Խումբը, չնայելով իր յոգնածութեան և քաղց ու ծարաւին, գնում է նրանց առաջը կտրելու։ Հեռից նկատելով, որ հայ քաջերը դուրս եկան գիւղից, Թուրքերը փախուստի տեղ ընդունելով նրանց հեռանալը՝ Աղբուլաղի կողմից ձիաներով թափւում են Խրմանջուղ, վառում երկու մարագ, մէկ տուն է սկսում թալանել։ Իսկ խումբը Մելիքջանլու չը հասած իմանում է, որ այդտեղ արդէն ռուս զինւորներ են եկել և ապահով կարող է համարւել յարձակման տեսակէտից՝ խնդրն վերադառնում է նորից Խրմանջուղ։ Այծակի արագութեամբ նրանք թափւում են գիւղը թալանող Թուրք բարբարոսների վրայ և նորից կտրելով փախուստի ճանապարհը՝ դնտակահար ու սրախողխող անում բոլորին։

Զորը լցւում է դիակներով, առուն կարմրում է հոսող արիւնից և տղաները, մոռացած իրենց քաղցն ու յոգնածութիւնը, իրիկնադիմին դուրս են գալիս ձորից, բերելով երենց հետ այս անգամ 3 ձի։

Այդ երկու կռիւներում սպանւած է Թուրքերից 70-75 հոգի, 9 ձի։ Հայերից՝ միայն մի ծերունի մարդ, որը իր չափազանց ծեր լինելու պատճառով, չէ կարողանում փախչել և ընկնում է Թուրքերի ձեռքը։ Մեր զինւորներից չի վնասւում և ոչ մէկը։ Ար-ը խլում է Թրքական սահմանի վրայ տնկած կարմիր դրօշակը, որը և պահւում է մինչև այսօր։

Հետևեալ օրը դիակները տանելուց յետոյ, Թուրքերը վրէժ առնելու նպատակով, գիշերով գալիս, մտնում են գիւղը և հրդեհում դրեթէ բոլոր մարագները և 7 էլ տուն։

Միանգամայն հեռու լինելով նախայարձակ լինելու ցանկութիւնից, մերոնք ոչ մի գիւղի վրայ չեն յարձակւում, թէև կարող էին աւելի հեշտ կերպով թալանել և թէ նոյն իսկ հրդեհել մի շարք թրքական գիւղեր, որոնց բնակիչները շատ քիչ բացառութեամբ փախել էին և իրենց ամբողջ գիւղական հարստութիւնը թողել ճակատագրի խնամքին։

—

Խրմանջուղում այդ տեսակ խայտառակ ջարդ կրելուց յետոյ՝ Թուրքերը մի աւելորդ անգամ ևս փորձում են յարձակւել այդ գիւղի վրայ և հիմնայատակ անել բոլոր տները։ Այդ նպատակը իրագործելու համար նրանք հաւաքւում են սոսկալի քանակութեամբ, զինւած մօտ 5 հարիւրանի հրացաններով և մի օր վաղ առաւօտեան գրաւում Խրմանջուղի շրջակայ լեռների բարձունքները։ Սուրհանդակը լուր բերելուն պէս, շտապում է այնտեղ Հատրութից Թուրքական խումբը Խէչ-ի, Արմ-ի և Ազր-ի հրամանատարութեամբ՝ բաղկացած 17 հոգուց։ Կռւի տեղը հասնելու պէս, անմիջապէս բաժանւում են երեք մասերի. մի մասը Արմ-ի առաջնորդութեամբ գնում է Խրմանջուղը շրջապատող լեռնաշղթայի աջ կողմով, Ազր-ը մի մասի հետ ձախ կողմով, իսկ Խէչ. բռնում է գիւղի գլխի բլուրը։ Երեք կողմերից այնպիսի արագութեամբ են ճնշում Թուրք խուժանին, որ կէս ժամւայ մէջ նա դրոհ է տալիս և սկսում խայտառակ կերպով փախչել՝ դնտակներ ընդունելով թիկունքից... Մերոնք հետևում են նրանց մինչև Թրքական գիւղերի սահմաններից էլ դէն, շրջապատում թրքական երկու գիւղ և սկսում կռւել։ Արմ-ը իր խմբով մտնում է Արիշ անունով թուրք գիւղը և հրդեհում. այրում, ոչնչանում է գիւղի մեծ մասը։ Մարդկային զոհեր այդ կռիւներում լինում են Թուրքերի կողմից 3-4 հոգի, իսկ վիրաւորներ շատ են լինում։ Դրանից մի քանի օր յետոյ հաշտութիւն է կնքւում գաւառապետ Ցիմբալովի միջնորդութեամբ։ Առաջարկւում է հայերին գնալ Ղարաբուլաղ անունով կենտրոնատեղին, որը գտնւում է թրքական գիւղերի մէջ, բացատրութիւն տալու, բայց հայերը չեն գնում, ասելով որ „մենք մեղաւոր չենք, յարձակւողը դրանք են եղել և իրանք էլ տուժել են. ինչո՞ւ են գալիս մեզ վրայ կռւի, որ կոտորւեն“։ Թուրքերը նոյնպէս չեն համաձայնում հայերի մօտ գալ, որովհետև վախենում են։ Երբ ոչ մէկ և ոչ միւս կողմը չեն ուզում զիջել, գաւառապետը աւելի բարւոք է համարում սահմանի վրայ նշանակել ժամադրութեան տեղը, որ երկու կողմերն էլ հնարաւորութիւն ունենան գալու։ Շաբաթ օրը երեկոյեան հանդիպում են ներկայացուցիչները, հայերը փաստաթղթի կերպով տխուր դէպքերի պատճառը և մեղադրանքը Թրքերի վզին դնելով, գաւառապետի և ուրիշ ռուս պաշտօնեաների ներկայութեամբ խոստովանել են տալիս Թուրքերին, որ մեղաւորը իրենք Թուրքերն են։

Խոստովանողները լինում են Ջամալ-բեկ և Հաշիմ-բեկ Վէզիրովները, Մաշադի Աբասկուլին, Ադի Գեօզալ և այլն, աչքի ընկնող խոշոր Թուրք ներկայացուցիչներ։ Այդտեղ պարտաւորւում են երկու կողմերը՝ մշակել պահանջներ, որոնցով պէտք է հաշուէին և մի օրից յետոյ նոյն տեղը ներկայացնել մեկ-մեկու։

Հետևեալ օրը տեղացող խիստ անձրևների պատճառով ընդհարում չեղաւ և մենք համոզուած էինք, որ երևի հաշտութեան լուրն է նրանց հանդստացրել։ Սակայն լուսացաւ երկուշաբթի օրը, և Թուրքերը նորից յարձակուեցին հայկական 3որ գիւղի վրայ։

Հաւարն ընկնելուն պէս դարձեալ թռաւ դէպ այնտեղ թուրքական խումբը։ Զնայելով տեղացող անձրևներին, Թուրքերը Արաքսից սկսած մինչև հայկական գիւղերի սահմանները, որքան կուելու ընդունակ մարդ կարելի էր գտնել, ձիաւորւում են և արշաւելով դէպի 3որ գիւղը՝ դժոխային դոռում գոչիւնով մտնում գիւղին։ Խումբը հասնում է ուղիղ այն ժամանակ, երբ հայ գիւղացիները բռնած իրենց նախօրօք պատրաստած դիրքերը՝ կուում և դիմադրում են Թուրքերին քաջերի կերպով։ Ինչպէս միշտ, այս անգամ ևս առանց քաշ դալու այս ու այն դիրքերում, հայ քաջերը նեռւում են ներքև՝ Թուրքերի վրայ, քշում նրանց հայ գիւղի շրջակայքից և սպառնում Ղշլաղ Թուրք գիւղը մտնել։ Տեսնելով հայերի այդ անակնկալ աջողութիւնը, Թուրքերը քաշւում են Սուլէյմանլու Թուրք գիւղի դլուխը և երկու մասերի բաժանուելով, մեկը ձախ, միւսը աջ կողմից՝ փորձում են կորել մեր յետևը։ Աջ կողմից օգնութեան է դալիս մեր ընկեր 3ով-ը իր խմբով և կորում այդ թեւի առաջը։ Ձախ կողմից էլ նրանք չեն կարողանում դալ, որովհետև արդէն այդ կողմից հասած են լինում Հադրութից սահմանապահ գնդի 2 տասնեակ զինուորները։ Դրանք թէև չեն մասնակցում, բայց իրենց ներկայութեամբ արդելք են լինում Թուրքերի առաջխաղացման։ Ամբողջ օրը կուում ենք անդադար և իրիկնադէմին շտուրմով մտնում Ղշլաղ։ Նորից հնչում է Թուրքերի համար այնքան սարսափելի ուռուայի ձայնը և Ղշլաղը մի բոպէում հրդեհի ճարակ է դառնում։ Ագ-ը որ կուի ամենավտանգաւոր տեղն է լինում, կանչում է իր ետ Արմ-ին, Խ-ին, Մուշ-ին և մի քանի զինուորների, որոնք մօտինի որոտնդոտ զալպերով ցրում են գիւղի միւս կողմից հդնութեան եկող Թուրք ձիաւորների անհամար խումբը, իսկ մնացած զինուորները գիւղացոց հետ միասին, որոնք ի դէպ, շատ քաջ մարդիկ են, այդ զալպերի հովանու տակ առաջ են տանում գիւղը քարուքանդ անելու գործը։ Մութը կամաց-կամաց վրայ է հասնում, տաղաներին հրաման է տրւում վերադառնալ։

Հրդեհը լափում է գիւղի մեծ մասը, իսկ մնացածները այրում են իրենք Թուրքերը հեռանալ լրը, որպէսզի իրենց վրէժը առած լինեն այն մարդկանցից, որոնք պատճառ են դարձել այդ օրայ կուին։ Թուրքերը տալիս են այդ կուում եղած զոհ, որոնցից մէկը մի պառաւ կին, որին խփում են հեռուից Թիւրիմացութեամբ։

Հայերից չի ընկնում և ոչ մէկը։

Զմռանամ ասել, որ այդ կուի նախընթաց օրը Թուրքերը թալանում են 17-20 տնից բաղկացած հայ գիւղը, այդ էլ շնորհիւ այն հանգամանքի, որ հայերը շրջապատած լինելով դրեթէ չորս կողմից Թուրք գիւղերով, թողել էին գիւղը անպաշտպան ու հեռացել։ Եթէ դէթ երկու հրացանաւոր մնար այդտեղ, ոչ ոք չէր համարձակիլ մտնել այդ գիւղին, այնքան ամուրէն բնական դիրքերը...

Մեծ ոգևորութեամբ էին կուում մեր զինուորները 3որ գիւղի կուի ժամանակ, բայց նրանց եռանդը աւելի էր կրկնապատկւում, երբ նրանց դիրքերն էին գալիս հայ կանայք, փոքրիկ աղջիկներ, երեխաներ, մէկի փէչը լիքը փամփուշտով, միւսի ուսին ջրով լիքը կուժը, մի ուրիշի կրնատակին հաց, պանիր, կերակուրներ և այլն և այլն...

Դրանից յետոյ գալիս է Թուրքերի ձեռնարկած մասնակի սպանութիւնները և հրդեհումները։ Հրդեհում են Բանաջուր գիւղացոյ Ղշլաղու հանդի մի քանի շերամապահութեան գործիքներ, խոտերի դէզեր և այլն։

Երկրորդ օրը գալիս է գաղան 3աւադ Աղան իր խմբով՝ բաղկացած հաշտարար կոմիսիայի 2 հայ անդամներից դաւառապետ 3իմբալովից և 100 կոզակից։

Հայ հասարակութեան տականքները մի փառաւոր ճաշ տալով 3աւադ Աղային և իր սվիտային, քծնում են նրա առաջ և իրենց զզուելի միմոսութիւններով քիչ է մնում արիւնահեղ դէպքերի ամբողջ մեղքը փաթաթեն հայ ժողովրդի վզին։ Սակայն գտնւում են և լաւ հայեր, որոնք այլ կերպ են լուսաբանում իրերի դրութիւնը։

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ

ԿԱՐՄԻՐ ՆԱՄԱԿ

Բ.

Արիւնո՛տ Բռնաւոր,

Ծով առ ծով Մանչուրիոյ բացա՛ստանները էն չարատանջ ազգիդ արիւնը հոսեցաւ եկաւ երկիրներուդ մէջ անգթօրէն թափել տւած արիւնը յորձանքելու։ Եւ այսօր սահմանէ-սահման, դիակներ և դիակներ են, որ քու վատասեռեալի ապարանքներդ, ինչպէս անծայրածիր պետութիւնդ, այնչափ, սարսափով և այնչափ ատելութեամբ կը կամարեն... Եւ դուն Բնութենէն եօթը անգամ անարգւած բռնաւո՛ր, գոնէ գործել, տւած նախճիրներդ ճակատ ճակատի նկատելու զօրութիւնն ալ չունենալով, ամէն օր ապաստանարան կը փոխես, գլխահակ և դողահար, 3արըսքօէ-Սելօէդ Բեթերհոֆ շտապելով, թերևս քու ճնշիմ և ապարդիւն կեանքդ պահպանելու խելացնոր մտածումովը։ Բայց դուն, անարժան յաջորդդ ուրիշ բազմաթիւ և այլասլէս եղեռնագործ Զարերու, յետ գնա՛ անոնց արիւնլայ պատմութեանը մէջ —եթէ քու ազազուն յիշողութիւնդ կը թոյլատրէ քեզ— յետ գնա և պիտի տեսնես անոնց բոլորին ալ պատժապարտ վախճանները։ Եւ այս հաստատումը պիտի բաւէ քեզ, դուն, որ հողը արիւնով ոռոգեցիր, որպէս զի քու սլատանքդ և քու դագաղդ դուն պատրաստես, որպէս զի դուն քու վիզդ քու կառափնատներէդ միոյն երկարես... որպէս զի դուն քու գերեզմանդ պեղես...

Բա՛ց սա վիժածի աչուլներդ, բա՛ց, թշառական թագակիր, և նայէ՛ անգամ մը, նայէ՛ քաղաքներուդ, որ կը հրդեհուին, նայէ՛ ճամբաներուդ անմեղներու և հերոսներու դիակներով դիզւած, նայէ՛ և սոսկա՛, միլիոնաւոր ժողովուրդներուդ որ բռունցքնին և զայրոյթնին քեզ՝ քու անկումդ կը մաղերգեն, նայէ՛ մերկ սուրերուն, որ կը շողան, նայէ՛ խաւարչտին և մրրկացող թափօրներուն, նայէ՛ կուի կարմիր դրօշակներուն, որ օդերուն մէջ գինով անգղներու պէս կը պարեն... Մտիկ ըրէ՛ ատելութեան սև ճիչերուն, մտիկ ըրէ՛ ցասումի որոտումին, ազատութեան քինավառ ու պայծառ ձայներուն...

—Անկցին՝ Ռոմանօֆները և կեցցէ՛ ազատութիւն...

Տես՝ քու երեկւան հաւատարիմ զօրախմբերդ իրենց սուինները այսչափ ժամանակ իրենց եղբայրներուն ուղղելէ խղճահար, այսօր կայծակնայայտ՝ քեզի կ'աղեղեն... Եւ վաղը, քու բարբարոս հեծելազօրքերուդ վաշտերն ալ այլ ևս յափրացած քու օրէնքէդ և հրամանէդ՝ քու իսկ վրադ պիտի արշաւեն...

Թշառակա՛ն, իբր թէ չի բաւեր քու և քեզ արբանեակ եղողներուն ոճիրները, երբ օր մը, երբ ոճիրի օր մը, հողին մէջէն, քեզի երկու արիւնթաթախ ձեռքեր երկարեցան, երկու ձեռքեր տիեզերքէն դատապարտւած, և անպայտմելի

չարիքներէ դողդոջում, դուն՝ մտքի չքաւո՛ր, վար իջար քու գահէդ, փնտռեցիր ու գտար Մեծ Մարդասպանին ձեռքերը, ծռեցար և քու շրթունքներդ քսեցիր... Ձեռքերը, կմախային ձեռքերը, ծածկամտութեամբ հեռացան և այսօր հայութեան արիւնը շիթ առ շիթ քու բերանէդ վար կը կաթկթի...

Գիտցա՛ծ եղիր, սև բռնապետ, այդ արիւնին մէջ այնչափ կայծ կայ և այնչափ կրակ, որչափ քու ազգիդ և քու դէմ պայքարող ուրիշ հպատակներուդ ճշմարտապէս հերոսական և հրաշէկ արիւնին մէջ...

Այս բոլորէն յետոյ շնորհներ կընես—քեզմէ մոլեգնօրէն և ի՜նչ անբուժելի հարւածներով խլւած—բայց Ցեղափոխութեան Ոսկեղէն Փոթորիկը, որ անսահման Ռուսաստանէն մինչ հեռաւոր և ըմբոստ Կովկասը կը յեղաշրջէ, որ ամէն հաւատարմութիւն կը չքացնէ, որ ամէն օրէնքի տախտակ կը խորտակէ, որ ամէն կոթող կը տապալէ և ամէն զինեալ քեզի դէմ կը զինէ, այդ գերբնական Փոթորիկը քաղցրանալ չի գիտեր, խաղաղիլ չի հասկնար և չի գթար, որովհետև իր բանավճիռը ա մ է ն բ ա ն է և հետևաբար Ցաղթանակ։

Ցառաջ եկու և ընդունէ քու դատապարտութիւնդ ինչպէս վայել է մեղապարտներուն, և ներկայացիր ժողովուրդներուդ արդարախօս վիհին և քաւէ ոճիրներդ՝ քու մահովդ, ինչպէս քու ծառաներդ քաւեցին իրենց մահովը և ժողովուրդիդ վճիռովը, եթէ ոչ այսօր կամ վաղը կամ մաքրագործումի ուրիշ առաւօտ մը պիտի՝ փշրուի, պիտի՝ փշրուի քու ծաղրելի գլուխդ, ըլլայ սալայատակներէն յափշտակւած քարակոյտով մը, ըլլայ քու և քեզ նմաններուդ այլ ևս ճակատագիրը եղող արդարադատ ռումբովը...

Փոթորիկը կը թաւալի և իր թևերէն արիւնն է որ կ'անձրևէ քու վրադ... Փոթորիկը չի դադարիր, տե՛ս, հարիւր միլիոն հոգիէ ներս խուժեց անիկա, ամէն գլուխի մէջ իր սրբազան բոցը վառեց, ամեն երդիկի տակ իր հսկայական թևերը բացաւ, ամեն հորիզոն կը լուսաւորէ, իր քայլերը չափ չունին և իր նպատակը հանգրւան չի հանչնար, Փոթորիկը կը սուրայ կլանելով ամէն անարդարութիւն, փշրելով ամէն լուծ, ոտնակոխելով ամէն իշխանութիւն, մաքրելով ամէն նեխութիւն, ջնջելով—փոշիացնելով ամէն վարչութիւն, ամէն թագ, ամէն գահ, ամէն բանտ, ամէն վճիռ և ամէն օրէնք...

Անհաւասիկ Ցաղթութեան օրը կը հասնի, այդ մեծափառ օրը, որուն մէջէն խիզախ ու քաջամարտ ռուսը ինչպէս հայրենածարաւ և հպարտ Բոլոնիացին, հինաւուրց և երկաթակամ հրէան, ինչպէս նաև գաղափարապաշտ և ըմբոստ և այլևս անընկճելի հայը, հաւաքօրէն և միաքայլ, և ձեռք ձեռքի ազատութեան և եղբայրութեան հողը պիտի ողջունեն, այն հողը, որուն անիրաւութեան անդունդները գոցելու համար իրենք իրենց մեռեալ զոհերը վար թափեցին, որուն խաւարակուռ ճամբան լրենց սրտին և իրենց ուղեղին արիւնովը լուսաւորեցին, և այս բոլորը առանց վատութեան կաթիլ մը արցունքը թափելու իրենց քինավառ աչքերէն, առանց պաղատանքի շարժում մը ուրագծելու դէպի քեզ, առանց հեծեծանք մը հանելու իրենց հպարտ և ասպետական հոգիներէն...։

Փա՜ռք այս բոլորին և գերեզմա՛ն քեզի։

ՍԻԱՄԱՆԹՕ

ԱՄՍԱԼՈՒՐԵՐ

„Դրօշակ"-ի խմբագրութիւնը հետևեալ հեռագիրն է ուղղել Հ. Յ. Դաշնակցութեան անունէն, Եւրոպական դիւանագիտութեան և մամուլին.

„Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը պարտք է համարում յիշեցնել մեծ պետութիւնների դիւանագիտութեան, որ Մակեդոնիայի մէջ ֆինանսական կօնսորցի համար նաւային հաւաքական ցոյցը որքան և ուրախացնում է Դաշնակցութիւնը, այնքան էլ իրաւացի յուզմունք է պատճառում նրան, ի տես օսմանեան կառավարութեան սպառնալիքներին, որը թերևս որամադիր է իր պարտութեան համար վրէժխնդիր լինելու, կազմակերպելով Հայաստանի մէջ քրիստոնեաների նոր կոտորածներ։ Կոտորածը արդէն իսկ սկսած է Էրզրումի և Բիթլիսի վիլայէթներում։

„Դաշնակցութիւնը ծայրայեղ կերպով բողոքում է Բերլինի դաշնագիրն ստորագրող դիւանագիտութեան ապշեցուցիչ անտարբերութեան դէմ հայ ժողովրդի վերաբերմամբ; որի դատը մակեդոնականից անբաժան է և որին այդ դիւանագիտութիւնը շարունակում է մատնել ամենավայրագ ճնշումների, առանց կեանքի ու ամենատարրական իրաւունքների սահ երաշխաւորութեան"։

*

Հեռագիրը նորից դուժում է թրքական ֆանատիկոսութեան բռնկումների մասին՝ Անդրկովկասում։ Արիւնածարաւ բնազդումները դոհացում չը ստացան կատաղած սարսափներով և ահա խուժան—ժողովուրդը նորից գրոհ տուեց հայութեան դէմ, այս անգամ՝ Գանձակ, Թիֆլիս... Հեռագրական հաղորդակցութիւնը կարուած լինելով Ռուսաստանում՝ լուրերը կցկտուր են, անորոշ։ Ամենից առաջ Պօլսական աղբիւրները հաղորդեցին „Հայկական դաղանութիւնների մասին"... „Ամբողջ Կովկասում հայերը անխնայ և բարբարոսաբար կոտորում են մահմեդականներին,... կին, ծեր, երեխայ,... մահմեդականները փախչում են Բաթումի վրայով դէպի Պօլիս... Թիֆլիսի տաճկական ընդհանուր հիւպատոսի կեանքը վտանգի տակ է" և այլն և այլն։ Դժւար է մի բան հասկանալ տաճկական աղբիւրների հաղորդագրութիւններից, որոնք կարող են նպատակ ունենալ նոր աղէտներ յարուցանելու Տաճկահայաստանում...։ Եւրոպական աղբիւրները իրենց կողմից եկան փոքր ինչ լուսաւորելու իրողութիւնները. Ֆրանսիայի Թղթակից Բերարանը հեռագրել էր արդէն Պարիզի Journal-ին Գանձակի կոտորածի մասին. նրա հաղորդածը այսօր հաստատւում է Frankfurter Zeitung-ի Կ. Պօլսի թղթակցի կողմից։ Կովկասից Պօլիս ժամանած եւրոպացի ճանապարհորդները, ասում է յիշեալ թղթակիցը, զարհուրելի դոյներով են նկարագրում Կովկասի մէջ տիրող անիշխանութիւնը։ Գանձակը քարուքանդ է եղել՝ թուրքերի և հայերի ձեռքով և կռւի դաշտում մնացել են բազմաթիւ դիակներ"... Նոյն եւրոպացի ճանապարհորդների ասելով „Թիֆլիսում և շրջակայքում յաղթանակը հայերի ձեռքին է" և մահմեդականների սոսկումն ու փախուստը կատարեալ է։ Ինչպէս ամեն տեղ, այդտեղ ևս սկսել են թուրքերը։ Նրանք դրսից ներս են խուժել, յարձակւել են Թիֆլիսի Կլուբի վրայ, կոտորել բոլոր ներկայ դտնւողներին։ Այնուհետև՝ ապստամբութիւն ամբողջ քաղաքում... Մահմեդականների կոտորած, յուսահատ, դահավէժ փախուստ դէպի Բաթում, այնտեղից՝ դէպի Տաճկաստան։ Տաճկական շրջանները սաստիկ յուզւած են. դեմումն է եղել սուլթանին՝ զօրք ղրկել Կովկաս՝ „կրօնակիցներին ազատելու համար հաւերի մոլեգնութիւնից"։ Թէ ինչ դիրք է բռնել զօրքը, կառավարութիւնը Գանձակի ու Թիֆլիսի անցքերի միջոցին —յայտնի չէ։

*

„Դաշնակցութեան" նախաձեռնութեամբ, Պարիզում, նախկին մինիստր Կամիլլ Պելտանի նախագահութեան տակ եւ մասնակցութեամբ Պրեսանսէի, Վիկտոր Բերարի եւ ուրիշների՝ տեղի ունեցաւ մեծ միտինգ ի նպաստ հայերի։ Տաճկահայոց եւ ռուսահայոց կացութեան մասին հանդամանօրէն խօսեցին Պրեսանսէ եւ Վիկտոր

Բերան։ Մեր բարեկամ Պ՝Էռ Քիառի մի դրաւոր զեկուցումը կարդացուեց. հիւանդութեան պատճառով, ինքը չէր կարողացել ներկայ գտնուել։ Միութիւնը միաձայն ընդունեց հետեւեալ որոշումը՝

Hotel des Societés Savantes-ում համախմբուած քաղաքացիները շնորհաւորում են ռուս ժողովրդին նրա որոշման համար՝ չը զատել իր սեփական դատից հայ, լեհ, ֆինն ազգերին։

Ցայտնում են իրենց սոսկումը Ջարդերի առթիւ, որոնք՝ Բազում, Թիֆլիզում, Երեւանում, Օդեսսայում Կիշնևում եւ այլն...գերագոյն ճիգերն են բարբարոսութեան ու հակայեղափոխութեան՝ փրկելու համար միապետութիւնն ու բիւրոկրատեան։

Հաւատում են, որ Եւրոպան պարտաւոր է իր և օսմանեան կայսրութեան ճնշուած ազգութիւնների առաջ՝ չը սահմանափակել նաւային ցոյցը պահանջելով արդար, բայց անբաւարար ռէֆորմներ Մակեդոնիայում, այլ եթէ անհրաժեշտ է, դիմել ուժի՝ լիակատար կերպով գործադրելու համար դաշնադրութիւնները յօգուտ Հայաստանի ու Մակեդոնիայի և ազատագրելու վերջնականապէս ամբողջ Տաճիստանը, նաև թիւրք ժողովուրդը։

*

Յուլիսի 21-ին Աբդիւլ-Համիդ դէմ եղած փորձի դատավարութիւնը վերջացաւ։ Թիւրքական դատարանը, որ Իլդիզ-Քիօսքի կամակատար ատրուկն է, մահուան դատապարտեց բելգիական քաղաքացի Էդուարդ Ժօրիսին, երեք անմեղ հայերի, որոնց յանցանքը հայ լինելն է, ինչպէս և տասն ուրիշ անձինք, որոնք ազատ են օսմանեան ստիկանութեան ճանկերից։ Դատավարութեան մանրամասները, խմբագրած թիւրք կառավարութեան ձեռքով և հրատարակած Պօլսի լրագրներում, չարամտութեան, խարդախութեան և ինսինուացիաների մի հակայական կուտակումն է։ Ժորիսին թիւրքական տանջանքներից կորզելու համար՝ Բրիսսելի մէջ ոգէն սկսած է հասարակական կարծիքի մի բունկումն, և սիրում ենք հաւատալ, որ բելգիական կառավարութիւնը այժմ կ՝ունենայ Մեծ մարդասպանին յարգել տալու 1839 թուից ի վեր երկու երկրների մէջ եղած դաշնագիրները... Իսկ կախաղանի դատապարտուած երեք հայերին ո՞վ պիտի պաշտպանի։ Ի հարկէ, ոչ հայոց պատրիարքարանը, որ սուլթանին հաճոյանալու քաղաքականութիւնը դարձրել է իր միակ պաշտամունքը։ Յեղափոխական քաջերին է վերապահուած մի օր, և այդ օրը կը հասնի— վրէժ առնելու այն բոլոր անմեղ նահատակների համար, որոնց ահագին ցուցակը այսօր աւելացաւ դարձեալ երեք անուններով...

*

Ռուսական մամուլի ազատութեան հրավարակից յետոյ՝ ռուս յեղափոխական կուսակցութիւնները՝ „Բէվոլիւցիօնայա Ռոսիա“ և „Պրօլետարի“, որոնք լոյս էին տեսնում Ժընեվ, դադարեցրին իրենց դոյութիւնը։ Կուսակցական այդ օրգանները այժմ հրատարակւում են ուրիշ անուններով Պետերբուրգում, ճիշտ է, առանց դրաքննութեան, բայց ոստիկանական խիստ հսկողութեան ենթակայ։

*

Պահպանողական երկարակեաց մինիստրութիւնը, վերջապէս, տապալուեց Անգլիայում և երկրի քաղաքական դէմն անցաւ ազատամիտ կուսակցութեան ձեռքը։ Կատարուեց համաշխարհային մի ծանրակշիռ անցք, որ պիտի անդրադառնայ ոչ միայն Անգլիայի ներքին ու դաղութային քաղաքականութեան, այլ և միջազգային յարաբերութիւնների վրայ, ուր բրիտանական նոր մինիստրութիւնը պիտի ձգտէ դրաշնել Գլադստոնեան կնիք։ Մինիստրներից մի քանիսը—Ջոն Մորլէյ, յայտնի հայասէր Բրայս, Հերբերտ Գլադստոն, և ինքը ազատամիտ Գրեմիերը՝ Բէնները ման— Մեծ Ծերունու մտերիմներից են և դա մի դրական է՝ որ միջազգային քաղաքականութեան հետ կապուած ու մինչև օրս առկախ մնացած արիւնոտ դատերը պիտի դառնան այսուհետև աւելի լուրջ մտահոգութեան առարկայ, Մեծ Բրիտանիայում։

Հ. Յ. Դ. Բագւի Կ. Կոմիտէն հրատարակել է մի կոչ, ուղղուած Բագւի ազգաբնակութեան, որով բողոքում է գրգռիչների, պրովոկատորների տարածած լուրերի դէմ՝ հայերի կողմից լինելիք յարձակման մասին։ Կոչը նաև մի նախազգուշացումն է՝ ուղղուած թուրքերին. «Դաշնակցութիւնը, չը ձեռնարկելով թուրքերի դէմ ոչ մի ակտիւ գործի, չէ կարող սակայն անպատիժ թողնել նոյնանման գործեր, որ թուրքերի կողմից ուղղուած կը լինեն հայերի դէմ»։

Նոյն Կեդ. Կոմիտէի մի ուրիշ թռուցիկը բողոքում է մահուան պատժի դէմ, արտասանուած հինգ անմեղ հայերի վերաբերմամբ, որոնք ամբաստանուել են, իբրեւ Նակաշիձէի սպանողներ։ «Հ. Յ. Դաշնակցութիւնը, որ ինքն իրա գործեց Նակաշիձէի համար դրուած մահուան դատավճիռը, իր բարոյական պարտականութիւնն է համարում ամբողջ հասարակութեան առաջ ամենակտրուկ կերպով յայտարարելու, որ իսկական սպանողները ազատ են, ապահով»։

Մի այլ թռուցիկ, հրատարակուած նոյնպէս Բագւում, ազդարարում է 9 տարբեր կազմակերպութիւնների ժամանակաւոր միացումը — Ընդհանուր Յեղափոխական Միացեալ Դաշնակցութիւն անուանով—դիմադրելու համար խուլիգանական ամեն տեսակ արշաւանքների դէմ։ Ստորագրած են եւ երկու մահմէդական կազմակերպութիւններ—սոց.-դէմոկ. «Հումաթ» եւ յեղափոխական «Ցիտիֆիպ»։

ՆԻՒՐԱՏՈՒԹԻՒՆ

Արեւմտեան Բիւրօն ստացած է՝

Ռուսաստան,— „ԴՐԱՄ“ Կոմիտէէն ֆր. 13000
Աւստրիա,—Վիէննայէն Ա. Գ.-ից նէէր ֆր. 40
Փրանսիա,— Փարիզի մի երեկոյթէն հաւաքած՝ ի նպաստ Ռուսաստանի Ցունարեան Աղէտաւորներին ֆր. 85, Մոնպէլիէի հայ ուսան. յօգուտ՝ „Հայ Ուս. Դաշնակցութեան“ ֆր. 35 Ամերիկայի ընկ. Մ. Զ.-էն նէէր՝ Մարսէյլ ընկեր Վ. Ղ.-ի միջ. ֆր. 35
Հնդկաստան,—Մադրաս Տ. Ինրայէլեան քահանայէ նէէր (20 շիլինգ) ֆր. 25, 10
Ցունաստան,— Զանթա Հ. Պ.-էն ի նպաստ Սասնոյ կարօտեալներու ֆր. 2։ Հանգանումարը 13222 ֆրանք եւ 10 սանտիմ։

Մ. Բ.-ի Կ. Կոմիտէն՝

№ 12-ի շարունակութիւնը.

Փետրուար 1-ից։ Լենինականի շրջ. Ազրայիլ խ. ա. տասնեակ փետր. 2. 30, եւս ք. տասն. փետր. 2. 10, եւս գ. տասն. 1. 10, Ա. Թ. Վահէի մէջ նէէր 4. 40, ճառագայթ խ. ղեկտ. 3. 30, ք. հարիւր. ք. յիս. նէէր նոր տար 12. 90, 3. հարիւր. 7 տասն. ղեկտ. եւ յուն. 12. 60, Պարոյր խ. 1902–4 հաշուից 56, Վ. Ա. խ. Վահէի մինջոցով 3. 75, Զարեւան. զին. խ. յուն. վճ. 4. 10, Ցօլակ խ. Բ. տասն, նոյեմ. ղեկտ. 15՝ 2|51 խ. դեկտեմբեր 4, 50, 53 խ. դեկտեմբեր 5. 75, Մղղասուց տուգանք 2, Ն. 17՝ խ. յունվ. ամ, 6. 45. Դարչօ-ի խ. մնացորդ ապառիկները 39. 50, ա. հարիւր. ք. տասնեակ յուն. 3. 75, ա. հարիւր. գ. տասն. յունվ. 1. 50, ա. հարիւր. 6 տասն. յունվ. 3. 70, Ակ. Զարեւանդի մէջ փետր. 4. 50 Ա. Պ. Ուզունից Վահէի մինջոցով նէէր 21, 15, Կոր Ս. Դաւիթ ուխտ. նէէր 12, Ն. 33՝ նոյմբեր 3. 15, Ն. 21՝ խ. նոյեմ. ղեկտ. 36, Վերահաս խ. փետ. ամս. 6, 60, Ն. 31՝ յուն. 4. 30, Ն. 34՝ ղեկ. 3. 95, Կարինէ խ. յուն. հոկ. 29, Կարինէ խ. գրքերի վաճառ 5, Ս. Բ. Շ. յուն. 5, Լենինաստ. շրջ. Ազրայել խ. դ. տասն. փետրուար 1. 20, Լենինաստ. շրջ. ե. տասն. փետր. ամսավճար 1. 50, Ն. 64՝ սեպտ. 3. 25, եւս ղեկտ. 4. 25, եւս յունվար 5. 75, Մ. եւ Ք. նէէր 5. 65, Ծարիկ Պատ. խ. փետր. 1 նէէր 10, Մեղաւորների խ. Պ. եւ Հ. մինջոցաւ նէէր 9, Ն. 41՝ յունվար 4. 75, Ն. 11՝ յունվար 6. 89, Ն. 12՝ դեկտեմբեր 4. 27, Ն. 14՝ դեկ. եւ յուն. 7. 03, Զարեւանդ խ. ա. տասն, փետր. 4. 60, Գուլ Զարեւանդի մինջոցով փետր. 10, ք. ստանցի Մ. Ղալազեանի մինջոց. 2. 50, Բաքվի խ. յուն. 5, Զարեւանդ մինջ. քոշ խ. փետր. 5, Լազօ Զարեւանդի մինջ. յուն. փետր. 10, Բաքվի խ. յուն. 2. 30, եւս փետր. 1. 50, գ. զինուորական հարիւր. 1904 թ. ամսավճարներից 40, ք. զինուոր. հար. է. տասն. դեկտ. յուն. փետր. 5, Անիւն տարոնացի խ. 1902–1904 թ. հաշուից 80, Ն. 69՝ դեկտ. 2. 60, Ն. 65՝ նոյեմ, դեկտ. 5, Ն. 62՝ դեկտ. յուն. 4, Ն, 37՝ յուն. 3. 60, Ն. 35 սեպտ. հոկտ. 6. 20, Ն. 33՝ դեկ. ամսավճար 3. 15, Ա. եւ Գ. նէէր 3. 50, Ն. 60՝ դեկտ. յուն. 8. 10, Ն. 58՝ դեկտ. 3, Փ. Ք. Ա. Մ. տուգանք 2, Փ. Խ. Գ. տուգանք 3, Շամիրամ զինուոր. խ. 1904 թ. հաշուից 20։

Գումար 608 ռ. 49 կ։

Մարտ 2-ից Ա. զին. հարիւր զ. տասն. յուն. փետր. ամսվ.ճար 4. 10, ա. զին. հար. ե. տաս. յուն, ամս. 1. 53, Ազգասէր տիկնան. խ. փետր. ամսավճ. 6. 75, դ. զին. հար. 1. 2. 3. 4. 5. 6. 7 եւ 8 տասն. յուն, ամսավճ. եւ հանգանակութիւն 32, բ. զին. հար. բ. յինեակ հանգանակած 15. 30 Սուլուկ խ. փետր, 5. 50, Ն. 31՝ մէկ անդամից նէր 2, Ն. 15՝ դեկտ. եւ յուն. 5. 40, Կարավանի խ. նէր 6. 65, Վտակ նոր խ. յուն. փետր. 20, ա. հարիւր. 7 տասն. փետր. 6. 75, ա. զին. հար. ա. տասն յուն. 3. 10, Զարեւանդ, բ. տասն փետր. 7, Մանուկ խ. յուն. փետր, 14, Նամոռտ խ. յուն. փետր. 15, բ. հարիւր. ա. տասն. յուն. փետր. 3, Ցիզան-պայծառ խ. մարտի 7 ստաց, 7. 50, Ն. 69՝ յուն. ամսավճ. 2. 60, Ն. 17՝ փետր. 4. 25, Ն. 17՝ Շանթի մէջ զրքերի վաճառումից 4. 53, Ն. 33՝ յուն. ամսավճ. 3. 15, Ս. Ք. Ը. փետր. 5, Ն. 37՝ փետր. 3. 60, Ն. 32՝ փետրուար 2. 65, Ն. 38՝ յունուար փետրուար 7. 30, Ն. 7՝ նոյեմբեր 5. 80, եւս դեկ. ամսավճ. 4. 60, եւս յունուար 4. 60, Ն. 53՝ յունուար 5. 75, Ն. 57՝ յունուար 4. 50, բ. զին. հար. 16 տասնեակ նէր մարտի 8-ից 10, Մանուշարից փետր. 5, Կարինէ խ. նոյ. դեկտ. 11, Բաֆֆի խ. մինչոցով նէր Կարապետ 5, Ցարութիւն Սանդուրեան նէր 5, Արշալոյս խ. մինչ. Սարգսից 13. 40, Տէրտէրեան յուն. փետր, մարտ 15, Շուշանիկ ա. խ. յուն. 2. 10, բ. զին. հար. 15 տասնեակ դեկտ. յուն. եւ փետր 5, ա. զին. հար. բ. տասն, փետր. 3. 75, եւս գ. տասն. փետր. 1. 65, եւս ե. տասն. փետր. 1. 50 Գուլ Զարեւանդի մէջ մարտ 20, Ն. 24՝ փետր. 9. 25, Ն. 25 փետր. 2, Ն. 36՝ փետր. 4. 95, Տիկին Տ. Մ-եան նէր 5, Ն. 34՝ յուն. 3. 95, Ն. 6՝ փետրուար 3. 60, Ն. 56՝ դեկտեմբեր 5, Ն. 58՝ փետրուար 3. 50. Ն. 3 | 51 փետրուար 2. 50, Ն. 17՝ Ներկայացումից 36. 75, Նոր Հայաստան խ. Կիզա Պայծառէի մէջ նէր 7, Ն. 17՝ օժանդ. խ. փետրուար 4. 45, Ն. 18՝ դեկտ. յունուար 4. 33, Ն. 19՝ յունուար 4. 75, Ն. 29՝ փետրուար 2. 60, Ն. 14՝ փետրուար 3. 32, Ն. 15՝ փետրուար 3. 15, Խաչատուր Բաղդասարեան Դերմէտցիից նէր 30, Լազօ-Զարեւանդի մեզ մարտի. 5, Բալ Զարեւանդի մէջ. մարտ 5, Զարեւանդ խ. բ. հին հաշիւները 28. 50, ա. զին. հարիւր. 10 տասն. նէր 100, Ն. 60՝ փետրուարի ամս. 5. 65, Շուշանիկ ա. խ. յունուար փետրուար 7, ա. զին. հար. ա. տասն. փետրուար 4. 50, ա. զին. հար. գ. յինն. 4. 40, ա. բ. գ. դ. եւ ե. տասն. յուն փետ մարտ 19. 80, Մ. ճարտարից ապրիլ մայիս յունիս 9, Փ. Դողից ապրիլ մայիս յունիս 3, Վ. Սարից ապր. մայիս յունիս 3, Ղ. Ղաբայից ապր. մայիս յունիս 3, Ե. Գետից ապր. մայիս յունիս 3, Ք. Ղարագեօզից ապր. մայիս յունիս 9, Օ. Մասիսեանից ապր. մայիս յունիս 1. 50, Ե. Շանթից ապր. մայիս յունիս 3, Ե. Մաքարից ապր. մայիս յունիս 3, Պ. Սավայից ապր. մայիս յունիս 6, Ե. Կանաչից ապր. մայիս յունիս 2, Հ. Կեռից ապր. մայիս յունիս 5, Ղ. Քիսից ապր. մայիս յունիս 3, Ե. Վէննայից ապր. մայիս յունիս 3, Ք. Ալագեօզ ապր. մայիս յունիսի 3, Ե. Ժանդից ապր. մայիս յունիս 3, Ե. Սարից ապր. մայիս յունիս 7. 50, Ե. Ջալաթից ապր. մայիս յունիս 1. 50, Ցօլակ խ. բ. տասնեակից յունուար փետրուար 7, Գ. Հաղեց ապր. մայիս յունիս 3, Ա. Քոռից ապր. մայիս յունիս 3, Վ. Մարալոից ապր. մայիս յունիս 6, Պ. Սաւուղից ապր. մայիս յունիս. 6, Գուլից ապր. մայիս յունիս 3, Ե. Սարգսեանից ապր. մայիս յուն. 3, Ե. Երշանիկից ապր. մայիս յուն. 1. 50, Ե. Երիտասարդից ապր. մայիս յուն· 4. 50, Գ. Գենդից ապր. մայիս յունիս 9, Ա. Համարձակից ապր. մայիս յունիս 4. 50 Մ. Մունջից ապր. մայիս յուն. 3, Ե. Սալեանից ապր. 3 Ա. Թարգեանից ապր. մայիս յունիս 4. 50, Ք. Շաբկից ապր. մայիս յունիս 1. 50, Մ. Ցնօսից ապր· մայիս յունիս 3, Ե. Սօնեանից ապր. մայիս յունիս ամսավճ. 3, Զ. Մկրտչովից ապր. մայիս յունիս 3 Շանթի նոր կազմ. խ. մարտ 13. 30, Ն. 13՝ փետրուար մարտ 6. 45 Ն. 16՝ յունուար 3. 70, Ն. 59 դեկտ. 2: Ընդհ. գումար 2,239 ռ. 43 կ.

Պալքանեան Կենդ. Կոմիտէն՝

ՌՈՒՍՁՈՒԳԻ ԿՕՌԻՏԷ՝ Շիբոռվի Կայծակ խումբ 58 լէւ 50 սանթ. եւս 19. 50, նոյն Բաղամի Ադիւն խ. 17, Վառօր խ. 14, Օ. Բարսեղեանէ նէր 1904 թ. 6, Վառնա Գ. Ն. Բ· 5, Տիկնանց Սօսի խ. 28, Շաբէ խ. 30, Հրայր խ. 42, Բաբկէն Սիւնի խ. 35, Թաքուլ Սալկարացի խ. 33, Տէռոր խ. 40, Ալօ խ. 24, Խրիմեան Հայրիկ խ. 17 Մանուէլեան խ. 32, Վրէժ խ. 21, Բօռապիա Ներմնիկէն նէր 4: Գումար 426 լէւ

ՖԻԼԻՊԷԻ ԿՕՄԻՏԷ՝ (մայիսէն—սեպտ.) Տարօն խ. վինակամանութեանէն 102 լէւ 40 ս. Արամեան խ. 45, եւս 48. 15, Օրիորդաց Կարմիր Խաչի Ա. տաս· 10. 50, Բ. տաս. 13, Գ. տաս. 14. 50, Դ. տաս. 15, եւս 15, Հրայր խ· 31, եւս 33, Արիստակէս Զօրեանցի Բ. տաս. 24, Արեւելեան խ. 17, Վրէժի Ա.. տաս. 40, Բ. տաս. 40, Տիկնանց Շաբէ խ. 50. 50, Հեթում-Գազիկ 40, Գայանըզի Անձնուրաց խ. 36, Արեւելեան խ. 16, օr. Սօսի-Այծեամ խ. 22. 40, Թաքար Բազարնըզի Ֆէդայի խ. 36, նէր Իսէն Կ. Պ.-ի միջ. 15, Լսարանէ գոյացած 27. 30, եւս 10: Գումար 702 լէւ 75 սանթ.

ՍՕՖԻԱՅԻ ԵՆԹԱԿՕՄԻՏԷ՝ (մայիս—սեպտ.) Հրայր խ. 37 լէւ եւս 33. 50, Տիկնանց Սօսի խ. 36, Օրիորդաց Շաբէ խ. 9. 40, Բրիսապոր խ· 28, եւս 24: Գումար 167 լէւ 90 սանթ.

ՊՈՒՐԿԱԶԻ ԵՆԹԱԿՕՄԻՏԷ՝ (ապրիլ—սեպտ.) Սասուն խ. 79 լէվ եւս 67, Արամ խ. 49, եւս 52, Անդօ՛ խ. 32, եւս 36, Եփրաս խ. 39, եւս 39, Բուլի-Բաբեր խ. 31, եւս 30, Ախթամար խ. 12, եւս 12, Օժանդակ խ. 49. 20, եւս 51. 20: Գումար 578 լէվ 40 սանթ.

ԹՈՒԼԶԱՅԷՆ հանգուցեալ Հ. Ա. Թ. կտակէն գանձած 80 ֆր.

ԴԱՆՈՒՐ ԿՕՄԻՏԷ՝ (1904 յուլիսէն—դեկտեմ.) N ընթերցարանի հասոյթ 160 ֆր. 05 սանթ. եւս 235. 75, Տիկնանց Կարմիր Խաչի գանձանակէն 146, եւս 91, Հազուլ խ. 30, եւս 24, Ֆէդայի խ. 21, եւս 15, Վարագ խ. 39, եւս 30, Զինասէր խ. 12, եւս 12, Սերոբ Աղբիւր խ. 21, եւս 26, Նոր Դար խ· 32, եւս 26, Զ. Գայլ խ. 24, եւս 27, Զ. Արամ խ· 23, եւս 18, Կարին խ. 21, եւս 18, Զ. Արարատ 17, եւս 8, Տարօն խ. 30. 50, եւս 11· 50, Սեպուհ խ. 21. 90, Մասիս խ. 7, եւս 24, Նէմրուռ խ. 15, Նոր Դար խ. անդամ Կղուղէ նէր 5, նոյն խ. անդամ Նոր Շէնէն նէր 5, Հազուլ խ· անդամ Աւապարխանէն նէր 5: Գումար 1201 ֆր. 70 սանթ.

(1905 յունուարէն—յունիս) Իս ընթերցարանի հասոյթ 375 ֆր. 30 սանթ· եւս 430. 85, Տիկնանց Կարմիր Խաչի գանձանակէն 94. 70, եւս 114, Սերոբ-Աղբիւր խ. 37, եւս 27, Նոր Դար 44, եւս 42, Ֆէդայի խ. 24, եւս 21, Վարագ խ. 24, եւս 30, Զ. Արամ խ· 21, եւս 18, Կարին խ. 20, եւս 21, Զինասէր խ· 12, եւս 27, Զ. Գայլ խ. 21, եւս 21, Հազուլ խ. 41, եւս 32, Մասիս 54, Զ, Արարատ 45, եւս 15, Նէմրուռ խ. 49, եւս 16, Տրդատ խ. 26, նէր ընկեր Աւազէ 5, Կուռէ 5, Ազատասէրէ 21, Հայկէ 11, Յառաջէ 6: Գումար 1750 ֆր. 85 սանթ.

(Շարունակելի)

ՎՐԻՊԱԿ.—Պրայիլայի ենթակոմիտէին նախորդ ցանկի գումարը պիտի լինի 342 ֆր· 60 սանթ.

ՀԱՅ ՅԵՂ· ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

		ֆր. ս.
1.	**Ազատամարտական ոգի** (սպառուած)	.10
2.	**Յեղափոխական կեանքից** (սպառուած)	.05
3.	**Դաղտնի տպարան** (սպառուած)	.05
4.	**Դիտական սոցիալիզմ.** Ֆ. ԷՆԳԵԼՍ	.40
5.	**Հայ Յեղ. Դաշնակցութեան ծրագիր.**	—
6.	**Կուկունեան խմբի արտաւանքը.** (սպառուած)	.20
7.	**Կարնոյ յիշատակին** (*Զորս հատուած*)	.50
8.	**Հ. Յ. Դ. Երկրորդ ընդհ. Ժողովի տեղեկագրութիւնը**	—
9.	**Գրքիջներ,** Homo homini lupus, ՎԱՐԴԳԷՍ	.20
10.	**Երիտասարդներին.** Պ. ԿՐԱՊՕՏԿԻՆ	.20
11.	**Ազատութեան նանապարհին.** ՂԱՐԻԲ. Ա. գրոյկ.	.30
12.	„ „ „ Բ. „	·60
13.	**Ամբոխային տրամաբանութիւն.** ԷԼԼԷՆԻ	.50
14.	**Ազատութեան նանապարհին.** ՂԱՐԻԲ. Դ. գրոյկ.	.30
15.	**Հայաստան եւ Մակեդոնիա.**	.50
16.	**Կովկասեան վէրքեր.** Է. ԱԿՆՈՒՆԻ	3.00
17.	**Հայրենիքի զաղափարը.** Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ	1.00
18.	**Կազմակերպական կանոնագիր.**	—
19.	**Դէպի կռիւ.** Է. ԱԿՆՈՒՆԻ	2.00
	(Կովկաս՝ 1 ռուբլի, Ամերիկա՝ 1/2 դոլար).	
20.	**Յեղափոխականներ.** Ս. ՆԻՐՎԱՆԵԱՆ	.20
21.	**Նախագիծ Կովկասեան գործունէութեան.**	—
22.	Подвиги царизма· В. Араратскій·	.50
23.	**Les tueries de Bakou.** A. ARAZI	.20
24.	**Յեղափոխական դաշն.**	.20
25.	**Հ. Յ. Դ. Երրորդ ընդհ. Ժողովի տեղեկագրութիւնը.**	—
26.	**Կոչ Մահմէտականներին.** Դոմ. ԱՊՏ. ՃԷՎՏԷԹ.	.10
27.	**Les Plaies du Caucase** E. AKNOUNI.	2.00
28.	**Ազատութեան նանապարհին.** ՂԱՐԻԲ. Դ. գրոյկ.	.40

ՄԵԾԱԴԻՐ ՊԱՏԿԵՐՆԵՐ

Բաբկէնի, Պեսոի, Կարօի, Սերոբի, Վահանի, Հրայրի, Սերոբի եւ որդոց. հատը 50 սանթիմ:

„Հայկական Ազատամարտը“ — Ալլեգորի, շեղ տիպ, խոշոր դիրքով, պատի համար — հատը 1 ֆրանկ:

ԲԱՑ ՆԱՄԱԿՆԵՐ

Յեղափոխական հերոսների պատկերներով, „Հայկական ազատամարտ“ եւ Ֆինլանդիա-Կովկաս. հատը 10 սն.

«Դրօշակի» այս համարը բաղկացած է 20 երեսից: